




ԻՐԱԾ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ
ԽԱՏԻՎԱԳՈՒԹՅԱՆ
ՀԱՅՈՒԹ
ԵՐՈՒՍԱԼԵՄԻ

ԿԳ ՏԵՐ
Ա-Բ-Գ

1989



Սիոն

ԱՐՄԱՆԱԿԻՒՄ ԿՐՈՆԱԿԱՄ - ԳՐԱԿԱՄ - ԲԱԼԱՏԱԿՐԱԿԱՄ

ՊԱՇՏՈՆԱՔԵՐՐ ԵՐՈՒՍԱԼԻՄԻ ՀԱՅ ՊԱՏԻՎԱՐՔՈՒԹԻՒՆ

ԿՊ. ՏԱՐԻ - ՆՈՐ ՇՐՋԱՆ

1989

ՅՈՒՆԻՎԵՐ - ՓԵՏՐՈՎԵՐ - ՄԱՐՏ

Թիւ 1-2-3

1989

January - February - March

No. 1-2-3


S I O N

VOL. 63

A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY


OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem



1989

St. James Press, Jerusalem



Հ 662

Ս. Էջմիածին, Ս. Մնունդ 1989

Նորին Ամենապատուոթիւն

Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Տէրտեանին

Պատրիարք Երուսաղէմի Հայոց

Երուսաղէմ

“Քրիստո Մնաւ և Ցայտնեցաւ”:

Զերդ Ամենապատուոթիւն,

Մեր Գրկչի Քրիստոփ Սուրբ Մննդեան աւետիսով ողջունում ենք Զեզ
և Գրկչի Եջման Սուրբ Մեղանից բերում Մեր Մատից բխած ամենաբարի մաղ-
քանները Զերդ Ամենապատուոթեան, պատմական Սուրբ Արքուիդ հոգեւոր
դասին եւ համայն մեր հաւատացեալ զաւակներին, աղօրքով զերմագին, որ
միշ պայծառ, լուսառաս մնան Սուրբ Արքուիդ աղօրքի Տուները եւ միշ
նրանց Սուրբ Մեղաններից բարեպատ ժողովրդին բաշխուեն ընորհները Սուրբ
Հոգու:

Մեր աղօրքն է, որ Քրիստոփ Սուրբ Մննդեան աւետուած երկնառաֆ
պատգամները լսելի զառնան մեր օրերի աշխարհին, ժողովուրդներին ու պե-
տուրեանց ղեկավարներին, որպէսզի մարդկուրեանը խնայուի կործանարար
արհաւիրքը պատերազմների եւ մարդիկ ու ազգութիւններ համերաշխ կերպով
զնեն փրկարար նաւահանգիստը խաղաղութեան:

Աղօրէնք նաեւ մեր Եկեղեցու եւ ժողովրդի կեանքի խաղաղութեան
ու մեր բազմաշարչար ազգի արդար սպասումների իրազործման համար:

“Փառք ի բարձունս Ասունծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ
հանութիւն”։ Ամէն :

Եղայրական սիրով ի Քրիստու



ՎԱԶԳԵՆ Ա.

Կարողիկոս Ամենայն Հայոց

2001



ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՆ

ԱՆՔԻԼԻԱՍ - ԼԻԲԱՆԱՆ

Թիւ 406:88

Անքիլիաս, Ս. Ծննդեալ, 1989

Ա. Ամենապատիւ

Տ. Եղիշէ Արքապա. Տէրտեան
Պատրիարք Հայոց Երուսաղէմի
Երուսաղէմ.

Սիրեցեալ Եղբայր ի Քրիստոս,

Խօս Մեր Տէրը եւ Փրկիչը Յիսուս Քրիստոս իր մարդեղութեան խորհուրդով
մարդեակին առջեւ բացաւ փրկութեան նամբան: Ինքն էր որ պազամեց.
“Ես եմ Ճանապարհ, Ճրիմարտութիւն եւ Կեանի” (Յով. ճ. 7. 6): Այդ նամ-
բան սկիզբ առաւ Բերդենէմէն եւ կը շարունակէ Քրիստոսի տեօրինական
կեանի գրուազներէն անցնելով մինչեւ մեր օրեր իր “Խորհրդական Մար-
մնոյն”, Ս. Եկեղեցւոյ մէջէն:

Ահա կը մօտենան այն օրուան, երբ Խաղաղութեան Խչխանին Ս.
Ծննդեան հրաշազան գրուազը պիտի վերակենդանանայ ողջ Քրիստոնեայ աւ-
խարհի եւ հայ ժողովուրդի կեանին մէջ: Իր սիրոյ անձնաւորեալ մարմնա-
ցումը մեզ կ'առաջնորդէ մասծելու եւ զործելու այն գիտակցութեամբ որ մեր
ապրումները, մասումները, արարքները եւ զործունէութիւնը ներքափան-
ցրւած ըլլան սիրոյ եւ ծառայութեան զաղափարով եւ կամով:

Կ'աղօրենք առ Ասուած, որ Քրիստոսի մարդեղութեան կենարաւ ոյժը
դառնայ աղբիւր եւ սիրոյ ու միութեան, համերաշխութեան ու խաղաղու-
թեան բարինները ընծայէ Երուսաղէմի Պատրիարքական Արքուի ուխտեալ
Միաբանութեան եւ համայն հաւատացեալ ժողովուրդին, ուպէսզի Քրիստո-
նէական հաւատէին եւ հայութեան հարազա ապրումներուն նոր տունչ տաք,
ի ծառայութիւն մեր Ս. Եկեղեցւոյ պատուական ժողովուրդին:

Մնամք Եղբայրական սիրոյ ողջունիւ

Աղօքակից

Գ. Ա. Բ Ե Գ Ի Ն Բ. Կ Ա. Թ Ո Ղ Ի Կ Ո Ո

Մեծի Տանն Կիլիկիոյ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԼԵՎԱՐ

SECRETARIAT OF STATE

No. 26/89/b

From the Vatican, 30th January 1989

His Beatitude Yeghishe Elisha Derderian

Armenian Orthodox Patriarch of Jerusalem

St. James Monastery — Jerusalem

Your Beatitude,

His Holiness Pope John Paul II duly received the message of prayerful good wishes that you addressed to him for feasts of Christmas and Epiphany, and for New Year.

His Holiness has asked me to thank you, and to assure you that in the festive season he confided to the Lord his prayer for peace and hope for you, your clergy, and your people. In his prayer he also asked that the pastors of all the Churches might receive the grace to persevere with confidence on the path towards full communion, witnessing to the Gospel together for the peace of the world and the glory of God.

In heartfelt union with the good wishes of His Holiness, I offer my fraternal greetings.

Yours sincerely in Christ,

CARD. CASSEROLLI

Secretary of State



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԼԵՎԱՐ



LAMBETH PALACE, LONDON, SE1 7JU

CHRISTMAS 1988

His Beatitude Yeghishe Derderian

Armenian Patriarch of Jerusalem.

Your Beatitude

"He has put down the mighty from their thrones and exalted those of low degree," (Luke 1:52). So said Mary, the Mother of the Lord, in response to Elisabeth's greeting in recognition of the coming birth of the Messiah. But so familiar have we become with the story of the birth of Jesus Christ that we easily forget that the Word was made flesh through the co-operation of a humble young woman; that it began in the poverty of a stable; and that it was first revealed to simple shepherds. Here, right at the beginning of the Gospel story, we find that the gulf between the glory of heaven and the harsh realities of human existence is bridged.

This is a truth that I was privileged to experience again for myself — and to see in the lives of many others — at Lambeth Conference which met at Canterbury earlier this year. Every one of the 525 bishops who assembled from all over the Anglican Communion had stories to tell of human misery, injustice and suffering. Sometimes the causes were man-made — the deliberate or unintended results of political decisions. Sometimes they were the results of natural disasters.

Yet, as the bishops talked about their pastoral ministry, we heard many stories of how God had been discovered in a world of poverty and need. The bishops repeatedly bore testimony to ways in which our great and holy God had entered the human situation and transformed it: "He has put down the mighty from their thrones and exalted those of low degree". This year the whole world has witnessed such a transformation in the events that are accompanying the Millennium of the Baptism of Kievan Rus. Our prayers are with the Churches and Peoples of the Soviet Union at this time and especially with the sufferings of the people of Armenia.

I pray that the celebration of Christmas may renew in our own experience the self-giving of God the Word which not only transforms the human condition, but also the whole creation over which humankind has been given a precious stewardship.

At this holy time, I send to you and to your Church my sincere Christian greetings.

Your Brother in Christ

DR. ROBERT RUNCIE

Archbishop of Canterbury



Հ Ե Ա Ա Գ Ի Բ Ն Ե Ր

Ամանորի և Ս. Ծննդեան տօներուն առիթով, Ամեն. Ս. Պատրիարք
Հօր կողմէ, Եկեղեցւոյ Սրբազան Պետերուն յշուած են հետեւեալ
շնորհաւորական հեռագիրները:

Երուսաղէմ, 23 Դեկտեմբեր 1988

Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա.

Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ա. Էջմիածին

Նոր Տարւոյ և Ս. Ծննդեան տօներուն բարեբաստիկ առիթով, խոնարհարար կը ներկայացնենք Զերդ Սուրբ Օծութեան մեր և Սրբոց Յակոբեանց Միաբանութեան սրտագին շնորհաւորութիւնները, խնդրելով Բարձրեալն Աստուծմէ որ շնորհէ Զեղ յաջողութիւններով լի երկար և առողջ կեանք, և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝ անսամանութիւն և բարգաւաճում:

Եղիշէ Արքեպս. ՏէրՏէրեան

Պատրիարք Հայ Երուսաղէմի

Երուսաղէմ, 23 Դեկտեմբեր 1988

Նորին Սրբութիւն Շնորհաւութեամբ Պատրիարք Վազգէն Տ. Պատրիարք Տ. Վազգէն Հայոց Ամենականական Աստուծմէ Յաջողութեամբ պատկէ Զեր բարի ջանքերն ու ծրագիրները:

Ա. Ծննդեան և Նոր Տարւոյ տօներուն բարեբաստիկ առիթով, յարգանօք կը ներկայացնենք Զերդ Սրբութեան մեր սրտագին շնորհաւորութիւնները, մաղթելով Զեղ յարունակական առողջութիւն և Զեր մեծ Եկեղեցին՝ բարգաւաճում: Թող Ամենականական Աստուծմէ Յաջողութեամբ պատկէ Զեր բարի ջանքերն ու ծրագիրները:

Եղիշէ Արքեպս. ՏէրՏէրեան

Պատրիարք Հայ Երուսաղէմի

Երուսաղէմ, 23 Դեկտեմբեր 1988

Ն. Ամենապատութիւն Պիմէն

Պատրիարք Հայոց Ամենայն Շնորհաւութեամբ Պատրիարք Տ. Վազգէն Հայոց Ամենապատութիւն Պիմէն

Մասկուլում

Ա. Ծննդեան և Ամանորի տօներուն առիթով, կը ներկայացնենք Զեղ մեր եղբայրական և ջերմ շնորհաւորութիւնները, սրտագին մաղթանքներով Զերդ Սրբութեան առողջութեան և բարգաւաճ գործունէութեան համար:

Եղիշէ Արքեպս. ՏէրՏէրեան

Պատրիարք Հայ Երուսաղէմի

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆՈՐ ԶԵՌՆԱԴՐՈՒԱԾ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՆ ՈՒ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԸ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅ



«Սիօն», իր ջերմ չնորհաւորութիւններուն հետ կը բաժնէ նոյնպէս բերկրանքը Սրբոց Յակոբեանց Միաբանութեան և մերտաղն ժողովուրդին, ի տես Հայաստանեայց Եկեղեցւոյ և մասնաւորապէս Ս. Աթոռոյ նորապատկերեք եպիսկոպոսներուն, որոնք այս կերպ չնորհազարդուած կու գան պայծառացնելու Ս. Աթոռը և ամբողջացնելու իր նուիրապետական շարքը, որ բացասիկ կարեւորութիւն և նշանակութիւն ունի Ս. Տեղեաց մէջ, իրաւունքներ և առանձնաշնորհումներ ունեցող մեր Աթոռին համար։

«Սիօն»ի ընթերցողները կը յիշեն անշուշտ թէ 1983ին Ս. Աթոռոյ Միաբանական Բնդէ. Ժողովը Եպիսկոպոսական բարձր աստիճանին արժանաւոր նկատած էր Միաբանութեանս Հայրերէն Հոգչ. Տ. Վաղարշ Վրդ. Խաչատուրեանը, Տ. Վահան Վրդ. Թօփալեանը և Տ. Աեւան Վրդ. Ղարիպեանը Անախորժ պարագաներ սակայն պատճառ եղան որ իր ատենին չիրազորդուի այս որոշումը և միայն տարւոյս նոյեմբեր 13ին՝ յիշեալ Հոգեշնորհ Հայրերը ստանան եպիսկոպոսական ձեռնադրութիւն և օծում։ Նոյն օրը եպիսկոպոսական ձեռնադրութիւն ընդունեցին Ս. Էջմիածնի Միաբաններէն Հոգչ. Տ. Տիրան Վրդ. Կիւրեղեանը, Տ. Ասողիկ Վրդ. Արիստակէսեանը և Տ. Պարզե Վրդ. Մարտիրոսեանը։

Համաձայն Սրբազն Պատրիարքի խնդրանքին, նորին Ս. Օծութիւնը, Տ. Վաղգէն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, հեռազրով կը հրաւիրէր Ս. Աթոռոյ թեկնածուները Ս. Էջմիածնին, եպիսկոպոսական ձեռնադրութեան համար։ Անոնց կ'ընկերանար նաև Պատրիարքը։ Երկար բայց հաճելի ճամրորդութենէ մը յետոյ, եպիսկոպոսական երեք թեկնածուները քաղցրազին բախտը կ'ունենային ողջունելու Հայրենիքը և համբուրելու անոր հողը, վայելելով նոյն ատեն Ամենայն Հայոց Հայրապետի հայրական գուրգուրանքն ու ասպնջականութիւնը։ Նոյեմբեր 13ի Կիրակի օրը, Ս. Էջմիածնայ Մայր Տաճարին մէջ, ի ներկայութեան ծովածաւալ հաւատաւորներու եւ եկեղեցական դասուն, կ'ընդունէին եպիսկոպոսական ձեռնադրութիւն, իրենց իրեկ օծակից ունենալով Ս. Էջմիածնայ երեք Միաբանները։ Ձեռնադրութենէն յետոյ անոնք կը մատուցանէին իրենց եպիսկոպոսական անդրանիկ պատարազները, շրջապատռած միշտ հաւատացեալներու բազմութենէն։

Ձեռնասունները աւելի քան երջանիկ են, որ նորին Ս. Օծութիւն Տ. Վաղգէն Ա. Հայրապետի արդիւնաշատ Ս. Աջէն անոնք բախտը կ'ունե-

նային ընդունելու եկեղեցական բարձրագոյն աստիճանի չնորհը։ Առանց պաշտօնական և նրբազգաց գրուատումներու, որոնց պէտք չունի, ամէն զնահատանքէ վեր, նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Հայրապետը, պէտք է ընդունիլ թէ այսօրուան Էջմիածինը շատ բան կը պարտի իր զահակալին, Բաներ՝ որոնք դիւրին ձեռք չեն բերուիր, և որոնց համար Լուսաւորչի Աթոռին արդի զահակալը արժանի է բովանդակ Հայ հաւատացեալ ժողովուրդի անվերապահ սիրոյն և յարդանքին։

Նոյեմբեր 13ի Կիրակին, առոտուան ժամերգութենէն յետոյ, նորին Ս. Օծութիւն Վեհ. Հայրապետի կարգադրութեամբ, վեց ընծայեալները ծունկի իջման Սեղանին առջև, կատարեցին իրենց հաւատարմութեան ուխտը՝ Հայաստանեայց Եկեղեցիին, Ս. Էջմիածնի և անոր արժանաւոր զահակալին, ինչպէս նաև կը կնելու իրենց յանձնառութիւնը Հայ ժողովուրդի ծառայութեան, համաձայն մեր Եկեղեցւոյ դարաւոր աւանդութեան և սկզբունքներուն։ Թէ և մարդոց առջև, սակայն Աստուծոյ և իրենց խղճին հետ դէմյանդիմանութեան այս վայրէեանը, հոգեկան անդո՞ի և զերազոյն յուզումի պահերէն մին պիտի ըլլար անոնց համար։ Ասոնք ապրումներ են՝ որոնք դիւրին չեն բացատրուիր, յուզումներ են, որոնք չեն վերջութուիր, վասնզի պահեր կան որոնք վեր կը մեան մեզմէ, երբ զմեզ անդամ մը ևս կ'առաքեն հայ պատմութեան դարաւոր խորհուրդին։

Ահա թէ ինչու այլեւս զզացում դարձած անոնց մտածումին մէջէն պահ մը կարծես իրենց տողանցքը կը կատարէին մեր Եկեղեցւոյ մեծ դէմքերը, որոնք օր մը ծնրագրեցին Աստուծոյ այս խորանին առջև, իւրաքանչիւրը իր սէրէն, իր նուիրումէն և իր կրակներէն բան մը գնելով այս նուիրական Հայատատութեան խորանին՝ մասնելու համար յետոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ ամբողջ փառքին, կարմիր գեղեցիութիւններուն և անթառամ յոյսի աստուածային ամպհովանիին մէջ։

Ս. Էջմիածնայ դարաւոր կամարներուն ներքե ծնրտդրողները վստահ եմ թէ ունեցան այն զզացումը, թէ երախտաւորեալներու շարանը, որ կը հսկէր երկոքի բարձունքէն, ժայիտ ունէր իր շրթներուն՝ վասնզի իրենց զործին ու մտածումին շարունակութիւնն էր որ կը վերանորոգուէր այս ուխտադրութեամբ։ Որքան մեծ են մեր դարերը, իրենց անպարագիծ վշտին ծանրութեանը մէջ բարախուն և Եկեղեցական բարձրագոյն աստիճանի այս ուխտադրութեան մէջ տարրեր չէր չնորհազարդուղներու ճակատագիրը անոնցմէ, որոնք մեր պատմութեան ծով դժուարութիւնները դիմակալեցին, մոռցած իրենց պատիկ մարզը, կեցած իրենց ժողովուրդի ցաւերուն դիմաց, սրբազան ու կարմիր ուխտով մը զրահաւոր։

Յետոյ խարտաւիլակը, յանուն Եկեղեցական դասուն, բաղկացած եպիսկոպոսներէ, քահանաներէ, սարկաւագներէ, ջահնկալներէ, երդմնեցուցիչներէ, ընթերցողներէ, Յդուապահներէ, սաղմոսասացներէ, ինչպէս նաև իշխաններէ և աղքատներէ, որոնք զզեստաւորուած կը հրաւիրուէին մաս կազմելու արարութեան, Հայրապետին կը մատուցանէին ընծայացուները և իրենց բոլորին խնդրանքը, թեկնածուները Եկեղեցւոյ բարձրագոյն աստիճանին բարձրացնելու։

Եօթներորդ աստիճանի շուրջին՝ Հայրապետը կը հրամայէր թեկնածուներուն կենալ արծուենաւ զորդին վրայ, իբրև խորհուրդ մտքի և հոգիի բարձրաթռիչ խոյտնքին առ Աստուած :

Տաճարը լեցնող բազմութիւնը կը ծփար ուլիք ալիք, համաձայն արարողութեան ընթացող գնացքին: Բոլոր դէմքերուն վրայ կը շարժի յուզումին հետ յամբընթաց ծանը ու մտայոց բան մը: Վեց ընծայեալներ ծնկաշոք կը կենան Սրբազն Հայրապետին առջև, լսելու մեր հոււատքին և դաւանութեան խոստովանութիւնը, համաձայն ձեռնադրիչ Հայրապետի հարցումներուն: Խորհրդաւոր է պոհի, ընծայեալներու երեւայութենէն կ'անցնին, իբրև խորհրդասքօդ շարժապատկերի մը մէջէն, քրիստոնէ ական մտածումին սրբութիւնը կ'երազ մեր Եկեղեցւոյ մեծ անձնաւորութիւնները:

Հակիրճ բայց տպաւորող արարողութենէ մը յետոյ, ընծայեալները բեմին վրայէն կը դառնան ժաղովուրդին, ծնրադիր և ձեռամբարձ: Եկեղեցականաց դասը երիցս կ'երգէ և Աստուածային և երկնաւոր չնորհ... ու և դպրաց դասը վարէն՝ յանուն ժաղովուրդին կը պատասխանէ. և Արքանի են»: Յուզումը կը լեցնէ տաճարը, վառուող չահերուն ներքի գէպի Սեղանը կարկառուող տրումանուշ նոյուածքներուն մէջ կը պապդան արցունքներ: Անոնք որ կը զգան ներքին մարդուն նորոգութեան այս երկունքը կը բոնուին տագնապէ մը՝ որ ճնշիչ է և խոր, և որուն հետ կարելի չէ հաշտուիլ տուանց աստուածային չնորհին: Տակաւ կը խաղաղի լարուած հոգեվիճակը Եկեղեցին լեցնող բազմութեան: Նորին Ս. Օծութիւն Հայրապետին ձայնը անհուն բարձունքէ մը իջնող պատզամի մը պէս կը հնչէ խորհրդաւոր: Ծնծայեալները կը կենան դարձեալ ձեռնադրող Հայրապետին առջև, որ յուզումէն կաթիթող ձայնով կը կարդոյ չնորհաբաշխութեան մեծ աղօթքը, որով Ս. Հողույն կենազործող չնորհը կը հայցէ ընծայացուներուն համար:

Կը քաշուի վարագոյքը, ձեռնադրուողները զգեստաւորուած եպիսկոպոսական հանդերձանքով՝ կը շարուին նորէն Սեղանին առջն: Ժամին է օծումին, իբր նշանակ Ս. Հողուով դրաշմուելուն: Դպիրները կ'երգեն «Կենդանարար Աստուած» շարականը, Սեղան կը բերուի Ս. Միւռոնի ալաւնին: Հայրապետը ընդունելով զայն, կ'երգէ Հողույն Սրբայ իջման շարականը, հեղուով սուրբ իւղը ուկեայ ընդունարանի մը մէջ: «Ամէն, ալելուիա», կը ձայննն զպիրները: Ս. Հայրապետը կ'ամփոփուի և կը վերանայ կարծես: Շունչ և ականչ դարձած է ամէն ոք: Արարողութիւնը իր ամենէն յուղիչ բարձրակեալին կը մօտենայ: Քարլութիւն, որուն անշարժութեան մէջէն կը հնչէ յուզումէն թրթուացող ձայնը ձեռնադրիչ Հայրապետին, որ կարզով կ'օծէ եպիսկոպոսուներուն ճականն ու այ ձեռքին բոյթ մատը: Ապա իւրաքանչիւրին կը յանձնէ արւչութեան ուրոյն օրհնութիւններով, զաւազանը, մատանին և Աւետարանը, մինչ զպիրները վարէն կ'երգեն «Որ ի վերայ ընեալ զաւազանի» շարականը: Այսպէս, եպիսկոպոսական թագով և եմիփորոնով զարդարուած, իշխանութեան մատանին և զաւազանը զգեցած, նորապատկ վեց եպիսկոպոսները Սեղանին վրայ շարուած կը կենան: Վերջացած է ձեռնադրութեան խորհուրդը. ստրկաւազր կը ձայնէ «Աղջոյն տուք միմիանցքը». Արարողան Հայրապետը նախ կը համբուրէ իր ձեռնա-

ոսւններուն օծեալ ճակատները, իրեն կը հետեւին բոլոր հոգեսրականները, որոնք իրենց կարդին ժաղովուրդին կը փոխանցեն ձեռնադրուած եպիսկոպոսներուն ողջոյնին անդրանիկ օրհնէնքը :

* * *

Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը այս առիթով կը բերկրի նուև ձեռնադրութեամբը Ընծայարանի երկու աբեղաներուն, Մեր զոյզ նորընծանները, Տրց, Յարութիւն և Տրց. Պետրոս, որոնք վերակոչուեցան Հայր Ռազմիկ և Մեսրոպ, և որոնք հոգեւոր ժառայութեան կը նուիրեն իրենց թարմատի կեանքը, կու զան մեր ժաղովուրդի խանարձ՝ բայց բեղմնաւոր խաւերէն: Անոնց մանկութիւնը թէն չէ քալած արեան և կորուստի ուղիներէն, սակայն տեսած ու զգացած են այդ աւերին կնիքով դրոշ նուած իրականութիւնը մեր Եկեղեցինին ու ցեղին, և իրենց զգայուն հոգին առաջին օրէն տողորուած է նուիրումի և զոհողութեան խորունկ զգացումով հանդէպ Մայրենի Եկեղեցինին և ազդի ժառայութեան: Ուղեցին զիսուռագործուիլ անոր, այն իրական զգացումով թէ ճշմարիտ հայու պարտք մը կը կատարեն, լուսաւորելու, ողեւորելու և ապրեցնելու, մութի, մօրմօքի և մահացումի մատնուած հաւաքականութիւն մը, որ իր զոյութեան զափիթափին վրայ կը գանուի և լոյսին զալու շարժումներ կը փորձէ:

Զանդողութեան ողին միշտ արթուն և կենդանի եղած է մեր գարաւոր կեանքին մէջ. եթէ յաճախ մէզի պակսած է իմաստութիւն, սակայն երբեք զանդողութիւն: Եւ արդէն ի՞նչ արժէք ունի կեանքը, եթէ ան կոտրած ճրազի մը պէս ամէն օր պիտի ծխայ ինքն իր համար միայն: Հայ Եկեղեցին դարերով այդ զոհողութեան կեանքն է ազգբեր, վկայ՝ իր բիւրաւոր նահատակներն ու սուրբերը: Հայ Եկեղեցւոյ պատերը իր զաւակներու արեան շաղախով ամրացած են, հայ հաւատաքին կանթեղը իր զաւակներու արցունքով միշտ վառ մնացած է: Հայ Եկեղեցին ցեղին լիզմանքն է, այն սրբարանը՝ ուր հայ կեանքը ամենէն աւելի մարզուեցաւ գէպի բարին և կատարեալը, այն զանձարանը՝ ուր պահուեցան մեր հոգին ու մաքին չնորհները, և մանաւանդ փրկութեան տապանը՝ մեր պատմութեան արիւնոտ ծփանքներուն դիմաց:

Երբեք մի՛ փոխէք զայն ուրիշ ո՛չ մէկ արժէքի հետ, ան՝ որուն ճարտարապետը եղաւ Լուսաւորիչ, որուն լուսարարապետը եղաւ Մեսրոպ, որուն ժիր մատուաւկը հանդիսացաւ Սահակ, որուն ազօթող քուրմը եղաւ Նարեկացին, որ իր հոգիին հետ Աստուծոյ ճենճերեց ցեղի հոգին, և որուն քաղցր երգիչը եղաւ Շնորհալին: Մի՛ նայիք այժմու իր ցնցուիներուն, անիկա երբեմն ծիրանազգեստ գշխոյ մըն էր, որ իր պատմուճանին պատառներով պատեց իր զաւակներուն վէրքերը: Եկեղեցին այսօր առաւել քան երբեք պէտք ունի իր զաւակներու սիրոյն և անվերապահ հաւատաքին:

Այս խորհուրդէն ու սրբազան հանդէսէն վերը, զուք սկիզբը կ'ընէք ձեր նոր կեանքի նորոգուած երեսին. թէկ սկիզբ՝ սակայն մենք բոլորս, որ կը նայինք ձեզի հայրական ու որդիական սիրով, պիտի ուղէինք տեսնել զձեզ ամբողջ մինչև ծայրը ձեր այս կեանքի ասպարէզին, կարենալ ըսելու առուքեալին

հետ «Զբարեոք պատերազմին պատերազմեցայ, զընթացն կատարեցի, զհաւատոն պահեցի»։ Դժուար անշուշտ, բայց հոգիսերուն համար որոնք գաղտփարի բոցէն են բռնկած, ոչինչ կայ անկարելի։ Պահեր կան, անմեռ պահեր, կեանքի մէջ, զորս տարիներու տագուռուկն ու մտահոգութիւնները չեն կրնար չնչել մեր յիշողութենէն։ Լուսաւոր լեռնադադարթներու կը նմանին անոնք, անոնց շքեղութիւնը կրնայ յաճախ տժգունիլ բայց չի մարիր։ Մովսէս՝ Սինայի բարձունքին, Պողոս՝ Դոմասկոսի ճամբռուն վրայ, առաքեալները՝ Սիոնի վերնատան մէջ, և Եսայի, Հին Աւխոտի մեծ մարդարէն, իր առաքելութեան սկզբնաւորութիւնը նուիրագործող տեսիլքին մէջ։

Եր երբեմն որ ազնուականներու, պայազատներու վերապահուած էր այս ասպարէզը։ Սակայն ան այսօր բաժինն է իրական ազնուականներու, մտքի, հոգիի բնաւրեալներու, առանց որուն մարդիկ զուհիլ արտրածներ են, նոյնիսկ իրենց ոսկիէ գեղերուն և փլոսկրեայ զահներուն վրայ, Բացէք ձեր միաքը Աստուծոյ լոյսին և մեր պատմութեան հրաշքին. վասնզի այս չնորհը ձրի չի գար. պէտք է առատանայ ձեր մտքի տեսութիւնը, մտքրուի ձեր հոգին, բացուիլ կարենալու համար Աստուծոյ փառքին և մարդոց կարիքին հաւասարապէս։ Ի վերջոյ մի մոռնաք որ արցունքով կը սրբուի հոգիին կտաւը և կրակով՝ մտքի ոսկին։ Վայ այն եկեղեցականին, որ թափուր մտքով և հոգիով կը կենայ իր ժողովուրդին դէմ։ Ունեցէք միշտ սէրը ձեր ժողովուրդին, որ Աստուծմէ վերջ գերազոյն իրականութիւնն է մեզի համար։

Վաստահ եմ թէ ճնշումին տակն էք այս Հաստատութեան մեծ հոգիներուն, որոնք իրենց արցունքով և արիւնով վառ պահեցին Ս. Յակոբայ կանթեղը և յանձնեցին իրենց անունը պատմութեան։ Ամէն անդամ որ ձեռնադրութեան մը չնորհաբաշխութիւնը կը կատարուի, կը խայտան անոնց հոգիները իրենց անմահութեան կայքին մէջ։ Զզացէք միշտ ինքինքնիդ այս յուզումին առթած տպաւորութեան ներքև և պիտի պաշտպանուիք վատառողջ սերմերէն։ Վասնզի այս մեծութիւններուն քով կան մարդկային փոքրութիւններ։ Մի՛ տեսնէք այդ ճնշիմութիւնները։ Ի՞նչ գեղեցիկ է այդ փոքրութիւններու քովէն անցնիլ խրոխտ և փերեւետեալ։

Ամէն Հաստատութիւն իր սէմպոլը ունի որ ուխտն է իր կեանքին ու զործին։ Մերը կտրուած զլուս մըն է։ Ով որ ի հարկին պատրաստ չէ տալու իր զլուխը այս նուիրական Հաստատութեան պաշտպանութեանը համար, չի կրնար անդամը ըլլալ Ս. Գլխադրի Ուխտին և անդամ այս զինուորեալ Միաբանութեան։ Կը չնորհաւորենք ձեր մուտքը սրբազն այս Հաստատութենէն ներս, մաղթելով որ ըլլաք և մշակներ առանց ամօթոյ։ Չեզի կը յանձնեմ Եկեղեցւոյ ծոցը, խնդրելով Աստուծոյ և այս Սրբազն Ուխտին բոլոր սուրբերուն հովանին ձեր երիտասարդ կեանքին վրայ։

b.



ՔԱՀԱՆՅԱԱԿԱՆ ԶԵՐՆԱԴՐՈՒԹԻՒՆ

4 և 5 Փետրուար, Նորար եւ Կիրակի օրեր նոցեւոր հօմայիս ուշախուրեան օրեր եղան Ա. Ցոլորիքանց Միսրանուրեան եւ Մայուսինին համար, ուռվինելու այդ օրերուն — հինգ ու կես տարիներէ ի վեր (յիշել Քրիստոնի խոսքը, «Հունձք բազում են բայց մօակի սակաւ» — տեղի ունեցան բահանայական (կուսակրօն) կոչման, ձեռնադրուրեան եւ օճման արարողութիւնները:

Նորար օր, Կիրակամից ժամեզրութեան յետոյ, զոյզ բնձայեալիներ, Ընծայաւանի բանենք ընթացուառութեաւը. Անուրիւն Մրկ. Պաղամոնք եւ Բարէ. Պետրոս Մրկ. Առղիկոնք, Մայր Տաճուրի մուտքեն, ճերագիւց յառաջացուան մինչեւ եկեղեցւոյ դուռ, ուր բազման եւ ձեռնադրիչ Ամեն. Ա. Պատրիարք Հոյեր: Խուստիխակն եւ Լուսաւարագետ Գերե. Տ. Գուրեզին Արքապատ: Փողովուրդը հետաքրիւ եւ խոնաւ աշենով կը հետեւե Կոշման արարողուրեան:

Կիրակի առաջօտ, Աւազ Մեղանին վրայ մոտուցուեցաւ հանդիսաւոր Ա. Պատրիարք: Ժամացան եւ Գերե. Տ. Սեւան Ապա. Գաղրիպետին:

Ճաւառ Գիրքն առաջ, Ամեն. Ա. Պատրիարք Հոյեր զգեստաւորուած բազմեցաւ Աւազ Խուստիխակն առջեւ, մինչ բնձայեալիները, Խուստիխակ Լուսաւարագետ Մերազմանին առաջնորդուրեամբ եւ Հոգե. Տ. Տ. Անուշուան եւ Գանիկ Վարդապետներու առբարեւակայուրեամբ, բես կը բարձրանան եւ կը բոլորուին Ն. Ամենապատուուրեան ուուշ, որ կը կարգայ մօւսիհաբաժնուրեան մեծ ազօրքը, որու աւարտին կը տաղերգուի «Էկատուածային եւ եւեկուուր մօւսիհ» յուղունառիք տարականը եւ բնձայեալիները ձեռամբարձ կը դառնան մողովուրդին՝ ուրուն ի դիմոց զայիներ կը ձայնն աւեմոնի են»: Անկ ես պահ մը կ'ընդիմառուի Զեռնադրուրեան Խորհուրդը, կը կարգացուին

Սուշեւ կու տանք համառօս կենսագրութիւնը նորագուակ Մերազմաներուն. —

Գերե. Տ. ՎԱՂԱՐԾ ԵՊՈ. ԽԱՉԱՏՅԱՆԻՆ. — Աւազանի անունով Մկրտչ, ծնած է Այս - Առու (Հիւս. Սուրբիու)՝ 1941ին: Եթե Ժամանագուուր առան Եռուսաղմէն եկած է 1956ին: Ժամանակ մը ծառայուծ է Մերասեղեաց մէջ: 1961 Հոկտ. իմ Ամեն. Ա. Պատրիարք Հօր կողմէն ձեռնադրուած է կուսակրօն խանանայ: 1971ին ի վեր կը վարէ Ա. Պատրիքան համայնքանեական Տաճարի Տեսչուրեան բարձր եւ պատասխանատու պատօնը:

Գերե. Տ. ՎԱՂԱՐԾ ԵՊՈ. ԹԹՈՓԱԼԵԱՆ. — Աւազանի անունով Հայրացած, ծնած է Պեյրու՝ 1940ին: 1957ին Եռուսաղմէն զալով, կ'առակերտի Ժառ. Վարդարանին եւ ազա Ընծայաւանին: 21 Յուլիս 1963ին ձեռնուզրուուծ է կուսակրօն խանանայ՝ ձեռամբ Ամեն. Ա. Պատրիարք Հօր: Ասեն մը հովուած է Վարանի (Ֆրանսաս) զալուրքը: Ա. Արուենի ներա կարն ժամանակ մը վարելի եսք Աւազ Թարգմանի պատօնը 1978ին դրկուած

է Ամենն, իբր Հոգեւոր Հովիւ Յուրդանանի Հայ Համայնքին եւ Տեսուչ (եւ ուսուցիչ) թւզպատան - Կիւլպէնկեան Վարժարանին:

Գերե. Տ. ՍԵՒԱՆ ԵՊՈ. ԱՐԻԹՅԵԱՆ. — Աւազանի անունով Յովիաննես, նոյնպէս ծնած է Պեյրու՝ 1940ին: Պարոցական կենսնին հրածես տակ եսք ժամանակ մը հետեւած է արհեստի: Եռուսաղմէն զալով 1965ին, տակեւրած է Ա. Արուեն Ընծայաւանին: Աբեղոյ ձեռնադրուած է 28 Յուլիս 1968ին, Ամեն. Ա. Պատրիարք Հօրեւն: Դասանագած է եւկար տարիներ Ժամանակին, իսկ 1982ին ի վեր նաեւ Աւազ Թարգմանի փափուկ պատօնը: Վարած է նաեւ Սուրբ Աստվածածնայ Տաճարի Տեսչուրեան եւ Մոտայաւարի պատօնները, իսկ 1977ին սկսեալ Լուսահանի պատօնը: Անդամ է նաեւ Գանձատան Մարմնի:



Յուլք Արքունոյս երկու նորընծանեց
Զախէն աջ՝ Հոգէ. Տ. Ռազմիկ Աբեղայ, Ամեն Մթազան
Պատրիարք Հայր, Հոգէ. Տ. Մեսրոպ Աբեղայ:



Յուլք Արքունոյ նորած Եպիսկոպոսնեց
Գեր. Տ. Մեսր Եպս. Ղարիպեան, Գեր. Տ. Վահակ
Եպս. Խաչատրեան և Գեր. Տ. Վահան Եպս. Թօփալեան:

Գիրք եւ ձ առև Աւետարան: Ձեռնայրութեան երկրութ բայնին մեջ, ընծայեալները կ'ընդունին պատրագիչի զգիսաւուրման զանազան մասերը: Ենոյ կը բառուի վարացոյքը: Եթե կը բացուի: Մաղան կը բեռուի Ս. Միռանի աշաւնին: «Առաքելոյ աղաւնոյն կ'եղանակուի Մրբազնեն» դաեն ու հոգեյոյզ:

Կր համան Օձման խորեղալից պահը: Ներկաներու խորուածութիւնը հոսած է իր բարձրակետին: Անուանափոխութիւնը, իր հօանուկ հոգեփոխութեան: Ու ահա Մրբազն Պատրիարք հատիկ հատիկ կ'աշտանն նու անունները, եթե կ'օճ հական ու զոյգ տիերը ընծայեալներուն: Յարուրիւն Մրկ. ը կը զառնայ Տ. Ռազմիկ արելայ, իսկ Պետրոս Մրկ ը՝ Տ. Մեսրոպ աբեղայ: Ենոյ Մրբազնը իրենց կը յսննէ Ս. Սկիհը, տալով Ս. Պատրիարք մատուցաններու իշխանութիւն եւ կը ձայնէ «Եւ եւս խաղաղութեան»: Նորբնաները «Խաղաղութիւն ամեննեցունշով իրենց անդրանիկ օռննենք» կու տան ժողովուրդին: Մուրիւուլը կը ձայնէ «Անդրոյն տուի միմիանց» եւ նախ Ս. Պատրիարքը ու ապա Մրբազն Պատրագիչը եւ եսքր ամբողջ հոգեւուական զար, բեմ բարձրանալով, կ'ալջապուրուին նորբնաներուն հետ, համբուրելով անոնց օծեալ նականները: Քիշ եսք անոնք կ'իջնեն եկեղեցւոյ զար եւ կը կինան քահայմերու վրայ բացուած Աւետարաններու գիմաց, ուր ժողովուրդը ներով եւ երկիւգածութեամբ կը մօսենայ նամբուրելու անոնց օծեալ աշերը:

Ս. Պատրագէն եսք, Լուսաւարայեա Գերե. Մրբազնը, վեղարի ըրչութեան կարգի աւարտին, մնուհազարդեց երկուին գլուխները կուսակրօնութեան ազգայնացած խորեղալներով:

Նորբնաները իրենց խորասունի ապահուսութեան ուշամբ անցուցին Ս. Հեթակագետացաց վանուց տեսչարանին մեջ, ուսանելով Ս. Պատրագի կարգեր Հոգե. Տ. Անուանան Վեդ. Զդանենան:

25 եւ 26 Փետրուար, Շաբաթ եւ Կիրակի օրերուն, անոնք մատուցին իրենց անդրանիկ Պատրագները՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վեայ, ի ներկայութեան իրենց հոգեւոր ծնողին: Խակ իրենց ուսուցիչն ու վարժիչը պատրագեց նոյն խորանին վրայ 27 Փետր., Եկուտաքքի, Տեառնընդառաջի տօնին:

Սուրեն կու տանի նակիրեն կենացրութիւնը նորբնաներուն. —

ՀՈԴԸ. Տ. Ա. ՋԱՄԻԿ ԱՐԳ. ՊՈՂԱՍԽԱՆ, աւագանի անունով Յարուրիւն, ծնած է 7 Ապրիլ 1927ին՝ Ամման: 1929ին բնանեօֆ փայտուրուած է Երևանուկիմ, ուր յանախած է «Թեոր Սաբրա» գրուցք Երկրուգալուն ուսումը կիսաւարտ բողած՝ 1942ին սկսած է աշխատիլ ուղիւ ոսկերիչ, եւ այդ ուղանին Հոյերեն գրել-կազմոլ սուրված է ինչ. նույասութեամբ: 1970ին, մօրք ու եղբայրութեան հետ Աւարտիու կը զարքէ, ուր ամեն Կրուկի կը մասնակցի Ս. Պատրագի եզեղցուրեան: Առաջնորդ Գերե. Տ. Ազան Մրբազնի ձեռամբ 1986 Օգոստոս 3ին, Սինիի Առւեր Յարուրիւն եկեղեցւոյ մեջ Կորութեան ասինան ոսացած է Էւ նոյն ամսու 17ին: Առւեր Ասուածածնի Վերափոխան տօնին, Մելքոնենի Ս. Ասուածածնին եկեղեցւոյ մեջ՝ Աւագ Սարկաւազուրեան ասինան: Ամիս մը եսք կը մեկնի Ս. էջմիածին, ուր կես տարի կը նետեի Հոգեւոր Ճեմարանի դասթեացին: 1988ի Մարտին կու գայ Երևանուկ ու կ'աշակերտի Առւեր Արռոյու Ընծայառանին:

ՀՈԴԸ. Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐԳ. Ա. ԱՊՈՂԱԿԻԱՆ, աւագանի անունով Պետրոս, ծնած է Պետրուր՝ 1961ին: Եւ տարւական կրութիւնը ասացած է տեղունի Փիրը եւ եկիզապէք Թարուսան Վարժարանին մեջ: 1976ին Հայ. բենիք մեկնելով՝ կ'աշակերտի Ս. էջմիածնի Հոգեւոր Ճեմարանին: 1980ին, աւարտելէ եսք Ընծայառանի Ա. դասարանը, կ'անցնի Երեւան եւ կ'ընդունուի թիւ 1 բազային բժշկական ուսումնարանի Laborator բաժնին, ուրիկ 1982ին կը վկայուի ուղիւ «Laborator assistant»: Նոյն տարին կը մտնէ Երեւանի Բժշկական Համալսարանը, ուր կը մնայ տարի մը: 1986ի աւեան զարով Երուսակիմ, կ'աշակերտի Ընծայառանին: 1987 Յունուար 26, Անուանակոչութեան տօնին, Ս. Յարուրեան Տաճարին մեջ, Քրիստոփ Ս. Գեթեզմանին առջեւ Աւագ Սարկաւազուրեան ասինան ոսացած է Պատր. Փոխառող Գերե. Տ. Կիւեկ նոյս. Գաբրիկեան:

«Մինչ», յանուն Ամեն. Ս. Պատրիարք Հօր, իր պրաջերմ մնուհաւուրիւնները կը բեռ Միաբանութեան նորազոյն անդամներուն, մարդելով պազալից գործունեութիւն:

ԱՆՑՆՈՂ ՏԱՐԻՆ

Աւրախ տարի մը չեղաւ 1988ը, բայց չեղաւ, բարեբախտաբար, անյաշող տարի մը (յաջողութեան յղացքն ու յարաբերականութիւնը տեղին չէ հոսմատնանշել), թէ՝ արտաքին — քաղաքական ու անտեսական — և թէ՝ ներքին — վանական ու ազգային — տեսանկիւններէ դիմուած:

Հեշտ ու նպաստաւոր պայմաններ անշուշտ թէ կը նպաստեն յղացռւած ծրագիրներու և ձեռնարկներու յաջողութեան: Սակայն յաջողութիւններ ու նուաճումներ արձանագրել ի հեճուկս դաժան ու անսպաստ պայմաններու ու պարագաներու՝ հոսանքն ի վեր թիւավարելու նման բազմաճիգ ու դրուատելի արարք մըն է, պատիւ բերող զանոնք իրազործողներուն, որոնք, առանց ազդուելու բրգացող խոչընդոտաներէն, զիտեն ամուր ու անշեղ քայլերով դիմել իրենց նպատակելուն:

Եթէ ուզենք խօսիլ վերև մեր ակնարկած դժուարութիւններուն ու գժբախտութիւններուն մասին, անկասկած որ արտաքին ճակատի վրայ, աւելի քան տարիէ մը ի վեր Ս. Երկրին — իմա՞ ռԱրևմտեան Ափօքին (մէջն ըլլալով Երուսաղէմի արևելեան բաժինը) — մէջ շարունակուող քաղաքական խլըրտումներն ու արիւնալի միջադէպերը կու զան առաջին զծի, անդամալուծելով մանաւանդ տնտեսութիւննը մեր զաղութիւ ալ զաւակներուն: Շուար ու անտահով կացութիւննը արտագաղթի ճամբան աւելի լայն կը բանայ ու հրապուրիչ կը դարձնէ կոտորակուած Սաղիմահայ զաղութիւ անդամաներուն առջեւ:

Անդին, մեր վերածաղկեալ Հայրենիքին համար ալ բացառապէս դժուար ու գժբախտ տարի մը եղաւ 1988ը: Զեռնավերջին սկսած Դարաբաղի դէպերը հին ու չսպիացած վէրքերէ ծորած թարախի զարշութեամբ դառնացուցին կեանքը հայրենաբնակ ու Ատրպէյճանաբնակ մեր ժողովուրդին: Յեղային ատելութեան թոյնը տեղական ջարդերով դրսնորուեցաւ ատեն ատեն: Նորէն իջաւ սև վարազոյրը պայծառութեան նշոյլներ արձակել սկսով մեր ժողովուրդի քաղաքական հորիզոնին վրայ: Զհատուցուած ու մարտուած իրաւունքներ ու անդարմանելի մասցած քաղաքական սխալներ ու անարդար վճիռներ ինչպէս համազոյքի շատ մը շրջաններու՝ նմանապէս ա՛յդ երկրամասին մէջ հեռու կը պահեն խաղաղութիւնը խաղաղասէր զանգուածներէն:

Խոկ ինչ որ վերջին ամսուն պատահեցաւ մեր Հայրենիքի հիւսիսային մասին մէջ, դարերը մէկ կրկնուող իր ահաւորութեամբ, մեծազոյնը եղաւ անշուշտ վերջացող տարւոյ աղէտներուն: Զափազանցութեան մէջ չէին օտար թղթակիցներ, երբ Քսաններորդ Դարու Հայոց Երկրորդ Եղեռնը իրեն ընդունեցին զայն: Երկրաշարժը հնձեց մէկ եօթանասներորդը Սովետական Հայաստանի սահմաններուն մէջ ամփոփուած մեր հարազատներուն:

Դարձնելով մէտալը միւս երեսին վրայ, ինչպէս ըսինք, 1988ի ընթացքին բարեբախտաբար պակաս չեղան պայծառ ու յուսազրիչ երեսիթներ: Միաբանութիւնն ու Վարչական կազմը Ս. Աթոռոյոց ըրին իրենց կարելին, ամուր ու ապահով հիմերու վրայ պահելու հոգեոր ու կրթական զործը, աւելի ճշգր՝ առաքելութիւնը Հայ Երուսաղէմի: 12 նոր աշակերտներ բերուեցան Հոկտեմբեր

ամսուն Լիբանանին և Սուրիային և արձանագրուեցան իրքն սաներ ժառանգաւորաց վարժարանի Բնածայարանին ընթացաւարտ զոյզ մը բարեշնորհ Սարկաւագներ Սուրբ Ծննդեան չըջանին անցքը կը սպասեն, ընդունելու համար վեղարին կոնը իրենց զլիսուն: Նոյեմբերին, Միաբանութեան երէց անդամներէն երեքը արժանացան Եկեղեցւոյ իշխանաւորի — եպիսկոպոսութեան — բարձր աստիճանին: Անոնցմէ մին ըլլալով տարիներու սիրուած Հովիւը Ամմանի Հայութեան, Յորդանանի թեմն ալ — նման Յունաց և Լատինաց — բարձրացաւ Եպիսկոպոսական Վիճակի: Ս. Թարգմանչաց ազգային վարժարանն ալ, չնորհիւ իր բազմամեռյ Տեսուչ Գերշ. Տ. Կիւրեղ Սրբազնին և ուսուցչական որակեալ կազմին, 150 երկսեռ աշակերտներ տաղաւարող իր երեք բաժիններով — Երկրորդական, Նախակրթարան և Մանկապարտէղ — զործեց ըստ Նախընթացի:

Զոյզ Տպարաններէն ներս ալ շարունակուեցաւ ճոխնչը մամուլին, հակառակ զործաւորներու զգալի պակասին, ինչ որ մեզայատուկ երեսյթ մը չէ: Անոնցմէ նորը, որ իր ճակարն կը կրէ ծածկանունը Ս. Աթոռոյս բանաստեղծ Գահակալին, ոչինչով ետ կը մնայ քաղաքիս ամենէն արդիական տպարաններէն: Այստեղէն է որ լոյս տեսան նորին Ամենապատուութեան «Լուսաւորիչ» մեծարժէք զործը, ինչպէս նաև 1943ին տպուած և Երան Քարոզին վերլուծական մեկնաբանութիւնը ընող սպառած հատորին Բ. տպազրութիւնը: Խակ դարուեկէս կեանք ունեցող հին Տպարանէն լոյս աշխարհ Եկան ռիխոնքի չորս (Եռամսնայ) թիւերը, ինչպէս նաև Ս. Աթոռոյս 1989ի գրպանի Օրացոյցն ու Հայ Երիտասարդաց Միութեան թերթի 50ամեակի Բացառիկը և այլ բազմաէջ թիւ մը:

Յիշատակութեան արժանի այլ պարագայ մըն է ժառանգ. Վարժարանի պարբերաթերթ «Զուարթնոց» երեսում աշնան եղանակին: Մեր Սարկաւագները զովելի ջանասիրութեամբ մը իրենց սուղ ժամանակն ու համեստ կարողութիւնները տրամադրեցին ուսումնասիրութիւններով կամ թարգմանութիւններով զրական հրապարակ իշնելու: Վատահ ենք որ, չնորհիւ Ս. Պատրիարք Հօր կորովի ջանքերուն և վերադիմութեան, «Զուարթնոց» խթան մը պիտի ըլլայ որ յառաջիկային մեր Ընծայարանի ուսանողները աւելի հասուն և խնամեալ էշերով շարունակեն իրենց լուման բերել Հայ դպրութեան:

Վանական միւս Հաստատութիւններն ալ — Մատենադարան, Թանգարան, Դարմանատուն, Խոհանոց են. — բաց պահեցին իրենց գոները:

Արտաքին աշխարհի մէջ ալ արձանագրուեցան սրտապնդիչ երեսյթներ, որոնցմէ կ'արժէ յիշել Արեւելք-Արեւուտք ձգտեալ յարաբերութեանց զգալի բարեկաւումը, չնորհիւ Ռէկընի և Կորպաշնի մեծասրութեան և Իրան-Իրաքի ութեամեայ անիշաստ ու բազմավաս պատերազմին դադարումը: Ռուսական բանակներու Աֆղանիստանէն քաշուիլը, Հիւս. Ափրիկէի Արարական պետութեանց յարաբերութիւններու բարւոքումը մէկ կողմէ և Եղիպտոսի ու իր ցեղակից պետութեանց միջև յարաբերութեանց վերահաստատումը կամ սերտացումը միւս կողմէ ճիշդ չէ բոլորովին անտեսել: Յոյն-Թուրք յարաբերութիւններն ալ ձգտեալ չեն այսօր:

Տայր Աստուած որ զալիք տարին արձանագրէ աւելի մեծ թիւ մը նման սրտապնդիչ երեսյթներու, նոր ու պայծառ հորիզոններ բացող մեր առջև:

Գ. Ճ.

ԿՐՈՆԱԿԱՆ

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ՊԱՏԳԱՄԸ^(*)

Շնորհման եթէ մէկը Քրիստոսի
մէջ է, անիկա նոր արարած
մըն է, հինգը անցան և ահա
ամէն բան նոր եղաւ։
(Բ. ԿՈՐՆԹ., Ե. 17.)

Պօղոս Առաքեալ իր Կորութացւոց Բ.
Թուղթին մէջ Քրիստոնեան կը ներկաւ-
յացնէ իրրե նոր արարած, Ան բուռն
կերպով զգաց իր մէջ այդ նորութիւնը
և զայն քարոզելու և տարածելու համար
դիմագրաւեց վատանգներ և չորչարանք-
ներ, ի՞նչ էր այդ նորութիւնը, որ Գո-
լուխիոյ, Սամարիոյ և Յուդայաստանի մէջ
կը հնչէր, մարդոց հրաւիրելու հրաժարիլ
իրենց շուտայտ կենցաղէն ու հսամալ տա-
րելակերպէն։ Նորութիւնը մը, որ կու գար
յեղաշրջելու մարդկային ընկերութիւնը
և անոր մարդկայնական դրոշմին զու-
գորդելու նաև աստուածայինը։

Կայսրութիւններ և թագաւորութիւններ կանգօր կը զգային իրենք զիրենք յայտնուած հոգիութեան առջեւ։ Այդ նորութիւնը միայն քարոզներու կամ մարդկայնական քարոյական վեհ սկըզ-
բունքներու շարան մը չէր, այլ Անձ մը, նոյնինքն Աստուած՝ յայտնուած մարդ-
կային պատմութեան մէջ։ Քրիստոնէու-
թիւնը Քրիստոսի անձն է, անոր ճառա-
գայթումը, որ դարերու ընթացքին մարդ-
կութեան տուաւ ուուրբեր, մարսիփառներ
և մեծագործ հայրապետներ, զերազան-
ցորէն սիրոյ պատգամ մը, որ մարդկա-
յին առողջ ընկերութեան շաղախն է։

Քրիստոսի նորութիւնը եղաւ հոգե-
կան զօրութիւն մը, որ յաղթականորէն
պայքարեցաւ աշխարհիկ ուժերու դէմ։
Պատմութեան ընթացքին յայտնուած զա-
նազան գաղափարաբանութիւնները չկըր-
ցան նոնմացնել Քրիստոնէութեան լոյսը,
որ եղական ազրիւրը եղաւ ազնուացման և
յառաջդիմութեան։

Քրիստոսի ընկալումը մեր հոգինե-
րուն մէջ կը կատարէ նոր մարդու կեր-
տումը, Դժուարին աշխատանք մըն է այդ,
Պարտինք անխնայ պայքար մղել հին
մարդու մեղանչական ձգտումներուն դէմ,
որոնք խոչընդուած մըն են այդ հիմնական
դարձին։

Նոր կատարանի էջերուն մէջ կը
տրոփէ այդ նորութիւնը, յեղաշրջող այդ
պատգամը՝ որ ազատազրիչ է և կերտիչ։

Մարդկութիւնը իր հարցերու լու-
ծումը կը պայմանաւորէ յաճախ բիբրա-
ույժով, Արքանց պակայն կ'արդիւնա-
ւորուին իր ջանքերը, երբ չկան ներքին
դարձը և նոր ծնունդը։

Արդէն կը գանուինք Ծննդեան պահոց
շրջանին մէջ, Պարագ տեղը չէ որ բոլոր
եկեղեցիներու մօտ Ս. Ծննդեան տօնը կը
կենայ շատ մօտիկը Ամասուրին։ Փրկչին
ծննդեան և տարուան սկզբնաւորութեան
միջեւ սերտ աղերս մը կայ. երկուքն ալ
իրենց մէջ կը ծրաբեն նորոգումի, որ է
կեանքը նոր ձեռվ ապրելու գաղափարը։

Մեր Տէրը Նիկողեմոսի հարցումին
պատասխանեց. «Պէտք է վերստին ծնիւ»,
Նիկողեմոս զայն ըմբանեց նիւթական ի-
մասաով միայն, բայց Տէրը կ'ակնարկէր
խորունկ այն հոգեկան վերափոխութեան,
որ նախապայման է բոլորին, մաս կազ-
մելու համար իր թագաւորութեան։

Ներկայ մարդը նետուած է սիւթի,
ոյժի և հաճայքի հեղձուցիչ յարձանքին
մէջ, մասնաւով, անտեսելով այն հոգեկան
վերազարթնումը, որ միակ ազրիւրն է
կենարար և բարեփախիչ ապրումներու։

Անցնալ տարուան վերջին ամսուն
մեր հայրենիքին մէջ պատահած ահաւոր
երկրաշարժին պատճառու, ներկայ Ամա-
նաբը կը գիմաւորինք հասկնալի տրտմու-
թեամբ, բայց ոչ առանց յօյսի։

Վասահ ենք որ Հայ ժողովուրդը,
Հնորինիւ իր առհաւական ջանասիրութեան
և կամքի տոկունութեան, պիտի վերա-
շինէ ինչ որ աւերուեցաւ ընութեան այս
զարհուրելի աղէտէն։

Նոր Տարուայ սեմին կանգնած՝ իմ
մազթանքն է որ 1989 ը Ալայ խաղաղու-
թեան, սիրոյ և համերաշխութեան տարի
մը ինչպէս Հայ ժողովուրդին՝ նոյնպէս
ալ համայն աշխարհին համար։

ԱՆՌԻԾԱԼԻԱՆ ՎՐԴ. ԶՂՋԱՆԵԱՆ

14 ՅՈՒՆՈՒԱՐ 1989

(*) Քարոզ՝ խօսուած Ա. Ցակորեանց Մայր Տա-
նարի բնէն, Կու Տարուան առաւօսուն։

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

«Ով Տէր, արձակէ ծառադ
խաղաղութեամբ քառ խօս-
քիդ համաձայն, վասնզի
իմ աչքերս տեսան քառ
փրկութիւնդ» (ԱԿ. Բ. 29)

Այսպէս ըստ Սիմէռն ծերունին,
չայր արդարը ըստ Աւետարանին, Սուրբ
Հոգիով լեցուած՝ տաճարին մէջ, երբ ըն-
դունեց Յիսուս Մանուկը, որ հան քեր-
ուած էր իր ծնողքէն իր հրաւապատուած
ծնունդէն քառասուն օրեր ետք. Մովսի-
սական օրէնքին համաձայն՝ Ծերունիին
Սուրբ Հոգիին կողմէ խստացուած էր
չմիևնիլ, մինչև որ Տիրոջ Օծեալը տես-
նէ: Ուստի ան խոր գոհունակութեամբ
— յատուկ՝ իրենց երազը նուածած մար-
դերուն — ըստ ։ Ալրդ արձակեա զծա-
ռայս քո, Տէր, ըստ բոնի քում ի խա-
զողութիւնն»:

Յիսուս եղաւ մեր փրկիչը: Ան իր
խոչելութեամբ և քառչարտը մահուամբ
ազատագրեց մեզ մեղքի կապանքներէն և
իր հրաշափառ Յարութեամբը տուաւ մեզ
յիշուն ու գրաւականը անմահութեան:
Պատմութիւնը տեսած է շատ մը ինքնա-
կոչ փրկիչներ, բայց անոնք հեռու մնա-
ցին մարդկութեան քերելէ փրկագործու-
թեան գերազանց աւետիսը:

Սիմէռն ունեցաւ անխար նախազգա-
ցումը թէ իր ուժաքամ թեերէն գրկուած
մանուկը դարեր առաջ մարդարէներէն
նախաձայնուած Մեսիան էր, լոյսը հեթա-
նուներուն և փառքը իսրայէլի ժողովուր-
դին — և լոյս ի յայտնութիւն հեթանոսաց
և փառք ժողովրդեան քում իսրայէլին:

Տեսունընդառածի դէպքին մէջ յիշ-
ուած անձերը — Ս. Կոյս Մարիամ, Հայր
Յովսէփ, Սիմէռն ծերունի և Աննա մար-
դարէւնի — Տիրոջ կամքին բոլորանուէր
հնազանդութիւն ցուցաբերած անձեր կը
ներկայանան մեղքի Պուկասու Աւետարանի
էջերէն: Առաւել ևս հաւատքի մարդեր:
Եւ գիտենք թէ, ինչպէս Քրիստոս ըստ,

«Ուր որ երկու կամ երեք մարդիկ իմ
անունավեա հաւաքուին՝ ես ալ հօն եմ ի-
րենց մէջ»:

Հնակարար, Տէրը յաւսախար չ'ըներ
իրեն ապահնած մարդերը: Սիմէռն ծե-
րունին յաջողնցու, հակառակ իր յառա-
ջացեալ տարիքին (Յայսմաւարութքը քանի
մը հարիւրներու կը բարձրացնէ թիւը
կեանքի իր տարիներուն), Յիսուս Ման-
էկէը առնել իր տիքերուն մէջ, սոխ քան
մանելը գերեզմանի մութիւն:

Որքա՞ն թելագրական է Սիմէռնեան
հաւաքավ գտնեպիսնդ մարդերու օրինակը
մեղսութից այս աշխարհի ալիքներուն վրայ
տարութերող անհատին համար:

Տիառնընդառածի տօնը մեր մաքին
կը բերէ ընծայման դաղափարը: Յովսէփի
և Մարիամ, ըստ հրէտական տանգութեան
կամ սովորութեան, Տաճար կը բերէին
Մանուկը իրեն ընծայեալ Աստուծոյ: Ըս-
ծայման գաղափարը իր լրումը, ամբող-
ջական իմաստը կը զտնէ զոհողութեան
մէջ: Ուրիշին ընծայարերուած որիէ ինչ
զոհողութիւն կ'ենթագրէ, այլ խօսքով՝
տրտայայտութիւնն է զոհողութեան ոգիի:
Ուինչ կ'արժէ ուրիշին մեր առածը, երբ
առոր փախարէն զոհողութիւն մը, զրկանք
մը չենք բրած մենք մեզի: Ուրիշ խօս-
քով՝ երբ չկամութեամբ կատարած ենք
դայն: Ըսծայման և զոհողութեան գաղա-
փարները լծորդուած են իրարոււ:

Օրուայ այս մեծ տօնին ափիթով, իմ
մաղթանքս է որ Տէրը, արդի մարդկու-
թեան և մանաւանդ մեր ժողովաւրդին մէջ,
քաղցացնէ հաւատքի մարդերը, բարեխօ-
սութեամբ Արքունւոյ Աստուծածնին —
որուն մաքրութեան (purification) տօնը
համարուած է Տեսունընդառածը —, որ-
պէսզի զալիք տարիները և զարը ըլլան
խաղաղ և արդիւնաւէտ գործունէութեան
շրջաններ:

ԱՆՈՒՃԱԽԱՆ ՎՐԴ. ԶՂՋԱՆԵԱՆ
27 Փետրվար 1989



(*) Քարոզ՝ խօսուած Ս. Յակոբեաց Խայր Յա-
նակի քանչեն՝ Տեսունընդառածի առաջնորդն:

ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ

«Զի՞ք խոտիր, ոչ հրէի և ոչ հեթանոսի, ոչ ծառայի և ոչ ազատի, ոչ արուի և ոչ իդի» (ԳԱՂՏ., Գ. 27-28)

Ս. Գրքի մէջ գոյութիւն ունեցող և սխալ մեկնաբանուած բազմաթիւ համարներէն մէկն է մեր իրրե բնարան ընտրած վերոյիշեալ համարը: Ինչպէս ազատութեան՝ այնպէս ալ հաւասարութեան սկզբունքին կամ գաղափարին չուրջ մարդկույին ընկերութեան մէջ միշտ ալ գոյութիւն ունեցած են տարրեր, երբեմ մինչև իսկ զիրար հերքող ըմբռանումներ ու տեսակէտներ:

Գալով սեսերուն միջն առաքեալին պատգամած հաւասարութեան, զայն պէտք է ընդունիլ միայն իրաւունքի հարցին չուրջ և ոչ պարտականութեան: Գիտենք թէ բնախօսական և կազմախօսական տրեսալներ կը բաժնեն երկուքին գործունէութեան դաշտերը իրարմէ: Ասպարէզներ կան որոնք յատուկ են մէկ սեսին և ասպարէզներ՝ որոնք յատուկ են միւսին: Այդ երեք չի չշանակեր սակայն թէ կիներու գործնական կեսնքի մէջ վերապահուած գերը կամ կատարած աշխատանքը ստորոտաս է կամ իր գերովն ու արժէքովը վար կը մնայ այրերու կողմէ արդիւնաբերուած աշխատանքին: Բայ է մատնանիշ ընել մայրութիւնը, որ զսեմուգոյն իտէալն է ու գերագոյն կոչումը կին արարածին:

Ընկերային ու ընտանեկան կեանքի մէջ ալ գոյութիւն ունեցած են միշտ և ունին հաւասարութեան հարցին չուրջ ծուռ ու սխալ մեկնութիւններ: Ամէն կազմակերպութիւն ունենալու է իր միակ պիտը կամ գլուխը: (Հեռու մեզմէ ջատագովութիւնը սիբրարօրութեան): Ժողովրդական իմաստուն (և ո՞ր մէկը իմաստուն չէ այդ տիպի առածներէն) առածը կ'ըսէ: «Երկու նաւազար ունեցող նաւը կ'ընկզմի» և «Յոհանաբարները երբ շատնան ճաշը կ'այրիւ: Երկգլխանի կամ բազմագլխանի կազմակերպութիւններ, ներքին պայքարներու ու մրցակցութեան մամբով,

առակ են քայքայման ու կազմալուծման: Եկեղեցին նոյնիսկ բացառութիւն չի կազմենք ընդհանուր այս սկզբունքէն, Պառակտուած ու իրենց առաքելութեանն ու առաջարգութեանը մէջ վրիպած կազմակերպութիւններ մէկ ու զօրեղ գլուխի մը, դիտապետի մը պակասէն կը տառածն:

Այս տաղերը կը գրուին թելադրան-

քին տակը նկեղեցւոյ մէկ հատուածին մէջ – Անկլիքան (յլմերիկա) – բեմադրուած տպեղ ու ամօթալի՛ այլև գոյթակղեցուցիչ ու աննախորնթաց երևոյթի մը, ուր եպիսկոպոսութեան սրբագան կարգին կը բարձրացուի մէկը իգական սեռէն: Ինչ որ պատկերը կը դարձնէ տեկի ևս աւազելի ու ողբերգական այն է թէ խնդրոյ առարկայ դիցուհին ոչ մայրապետ էր և ոչ իսկ աշխարհական կոյս, այլ ամուսնացած ու նոյնիսկ . . . ամուսնալուծուած: Հաւասարութենէ ձառող նոյն Պօղոս առաքեալը չէ՞ միթէ հեղինակը հնտեհալ պատգամին: Ակնոնայք յամենայն նկեղեցին լուռ լիցին: զի ոչ հրամայի նոցախոսելը (Ա. Կորնթ., ԺԴ. 34): Զարմանալու չենք եթէ յառաջիկային ալ նման արտառոց երևոյթներու ականջալուր ըլլանք նկեղեցւոյ մայր բռնէն, հաւատքի վկմէն հեացած հոգկոռը մարմիններու մօտ: Ու ի՞նչ զուգագիպութիւն որ նկեղեցւոյ առաջին իշխանուհին պիտի գործոցէն ճիշդ այն նկեղեցիին՝ որ կնոջական ճիզզ խնդրով – վերամուսութիւն – խզեց իր կապը Ընդհանրական և Առաքելական նկեղեցիէն:

Զէ կարելի Ս. Գրական հատուած մը մատնանշել, ուր կին մը ձեռնադրութեամբ ստացած ըլլայ հոգեկոր շնորհ:

Ամուր կենանք մեր նախահայրերու հաւատքին և նկեղեցւոյ աւանդութիւններուն զրայ, եթէ կ'ընդունինք թէ նախամական է գերը Քրիստոսի Հարսին:

Գլուխ Ս. Ճինիվիջեան

Ծանօթ. – Սինէի նախորդ թիւով Ս. Գետրոսի և Ս. Պօղոսի մասին զրած մեր յօդուածին մէջ Քրիստոսի 12 առաքեալներուն ըրած խոստումը ոչ թէ արքայութեան բանալիներուն մասին է, այլ երկրի զրայ կազմածներուն երկնքի մէջ կազմուած ըլլաւոն է և փոխադարձ:



Ա. Մ. Ա. Ռ Ի Ն

Ուսեն կար ուր նոր Տարին
Աւելէր խոստումը ոսկի
Մեզ տանիելու անվլէպ
Մեր երազի կատարին:

Ամէն տարի կու զայ ան,
Նուէրներու պարկն ուսին,
Պահ մը կ'օրրէ սիրը մեր
Խոստումներով փուն ու սին:

Կու զայ նորէն ու ըուար
Կ'ուղդէ նայուածքը չօրս զին.
Աչերուն մէջ կը կարդաս
Կեանի յանգած մեղեդին:

Զեռին ունի մեծ աւել,
Զօր երբ հայեացք էր եռուն,
Կեանի զարուն օրերուն
Զէյր կրնար դոն տեսնել:

Այսօր ժիշ ժիշ կորն անոր
Կու զայ խուիլ փետրուիդ,
Ու մրմունցն է իր անզութ.
— Գնա՛, տեղ տուր մարդուն նոր:

1989

Գ. ՃԱՐՏԱՐ

Ա. Ն Վ. Ե Բ Ն. Ա Գ Ի Բ

Ժամանակը անկարեկիր
Կը նորոգէ ինձինմ ստայ,
Մեր սերերը, յոյզն ու երազ
Խրենց տրում, լուռ վախճանին
Կը դիմեն շես ու անվլէպ:

Զայներ վնաս, չարազուակի,
Կեանի հեւենս, սամ տրոփին
Կ'արձազանգեն ելեւազին.
Փունջը մեր խած ապրումներուն,
Ա. Ենան հիւանդ համբոյրն ըմպած
Խնչպէս երեւ մը սրսիուն,
Կ'իյնայ յանկարծ մահուան ըուէին:

Ե՞նչ կ'արժեն յոյզ, ապրում, երազ,
Երբ յուսազուրի ու անմուրազ
Կ'ընենք մեր չուն դէպի անհուն:
Երբ ժամանակի արազանյը
Աէրերուն վրայ մեր վարդազոյն
Կը բափէ իր մաղձն ու քրուն:

Գ. ՃԱՐՏԱՐ



ՀԱՅ ՆԿԵՐՈՂՆԵՐ

ՍԱՀԱԿ ՎԱՆԵՑԻ

(1630? - 1690?)

Գրիչ, ծաղկող եւ կազմող Սահակ Դավիթ Վանեցի որդին էր Ամբրջանի եւ Զինարի: Եղած է աշակերտ Էջմիածնեցի Սիմէռն վարդապետի: Հստ երեսյթին աշխատած է առաւելապէս Վանի, Մուշի եւ Բաղէշի վանքերուն մէջ: Իր աւելի բան քառորդ դար (1658 - 1684) տեսող գրչական բիղուն գործունէութեան արդիւնքն կը յիշներ հնտեւեալները:

1. - Աւետարան, 1658, Վան: Գրիչ Թաղէոս քահանայ: Մաղկող՝ Սահակ:

2. - Շարակնոց, 1660, Վան: Գրիչ եւ ծաղկող՝ Սահակ Դավիթ: Ստացող՝ Նիկողայոս քահանայ:

Յուցակագրող Տրդատ Էպս. Պալեանի համածայն, «Խորանք եւ կիսախորանները, լուսանցազարդք եւ զարդագիրները գունաւոր ոսկեզօծ են եւ շատ գեղեցիկ վրձին» (Լոյս, 1905, էջ 662):

3. - Ժամագիրք - Տօնացոյց, 1660, Վան: Գրիչ՝ Սահակ Դավիթ: Ստացող՝ Գրիգոր սարկաւագ. - Զեռ. Երեւանի, թիւ 5684:

4. - Խորհրդատետք, 1662, Վան?: Գրիչ եւ ծաղկող՝ Սահակ Վանեցի: Պատուիրատու, Պատիկ Խաթուն. - Զեռ. Երեւանի, թիւ 5464:

5. - Ժողովածու (Պատմական), 1672, Ամրտոլու վանք: Գրիչը՝ Պօղոս Գաւըցի եւ Գրիգոր Երէց: Մաղկող՝ Սահակ Վանեցի: Կը պարունակէ ծաղկողին նկարը: Ստացող՝ Վարդան Վրդ. Բաղէշնեցի. - Զեռ. Երեւանի, թիւ 2639:

6. - Աւետարան, 1673, Մուշ: Գրիչ եւ ծաղկող՝ Սահակ Վանեցի: Ստացող՝ Աւետիս. - Զեռ. Երեւանի, թիւ 875:

7. - Աւետարան, 1674: Գրիչ՝ Պօղոս Կորկանեցի, Ս. Առաքելոց վանք (Մուշ): Մաղկող՝ Սահակ Վանեցի, Ամրտոլու վանք: Ստացող՝ Գրիչը. - Զեռ. Երեւանի, թիւ 6094:

8. - Նարեկ, 1674, Բաղէշ: Գրիչ՝ Թումայ Երէց: Մաղկող՝ Սահակ Վանեցի:

Ստացող՝ Ներսէս վարդապետ. - Զեռ. Ս. Յ., թիւ 2351:

9. - Աւետարան: Գրիչ՝ Յովանէս քահանայ, Կ. Պոլիս, 1674: Մաղկող՝ Սահակ Վանեցի, Ամրտոլու Վանք, 1675: Ստացող՝ Գրիգոր Քն. Քաւըցի. - Զեռ. Երեւանի, թիւ 5640:

10. - Յայսմաւուրք, 1684, Վարագայ վանք: Գրիչ եւ ծաղկող (մասամբ) Սահակ վարպետ: Կազմող՝ տէր Գրիգոր: Ստացող՝ Սարխոշ Ղասապ. - Զեռ. Երեւանի, թիւ 4723:

ՄԻՔԱՅԵԼ ԱՆԲԱՍՏԱՑԻ

(1630? - 1701?)

Միքայէլ գրիչ ծնած է ժէ. Դարու երկրորդ քառորդին սկիզբները հաւանաբար: Արդին էր Բարդամ գրիչ եւ Մայրամի: Իր ուսուցիչները եղած են, հայրը՝ տէր Բարդամ. ինչպէս նաև «տէր Աւետիք տումարակիրթ». եւ տէր Մկրտիչ: Ամուսնացած էր ունէր երկու զաւակներ: Իր գործերը կը վկայեն թէ մեծ կարողութեան տէր նկարիչ մըն էր Միքայէլ: Ան աշխատած է ընդհանրապէս Սերաստիա (1660 - 1682) եւ Եղոկիա (1684 - 1701): Իր գրձինքն ծանօթ գործերը կը ներկայացնենք հետեւեալ կարգով:

1. - Աւետարան, 1660ին գրած եւ ծաղկած է Սերաստիոյ Ս. Նշան վանքին մէջ. - Զեռ. Երեւանի, թիւ 651:

2. - Աւետարան, գրած է Մկրտում սարկաւագ Զուղայեցի, 1684ին, Եղոկիա: Մաղկող՝ Միքայէլ: Ստացող՝ մահտեսի Ներսէս. - Զեռ. Ս. Յ., թիւ 314:

3. - Մեկնութիւն Կաթուղիկեայց՝ Սարգսի Ծնորհաւոյ, 1687. Եղոկիա: Գրիչ՝ Մկրտում Զուղայեցի: Մաղկող՝ Միքայէլ: Ստացող՝ Մինաս Վրդ. Ամթեցի. - Զեռ. Երեւանի, թիւ 1370:

4. - Մատենագրութիւնք Գրիգորի Նարեկացւոյ, գրած եւ ծաղկած է 1692ին, Թոխաթ: Ստացող՝ Մինաս Վրդ. Ամթեցի. - Զեռ. Ս. Յ., թ. 2010, որ կը պարունակէ Նարեկացւոյ եւ Ամթեցւոյ պատկերները:

5. - Յայսմաւուրք, գրուած 1695ին, Մկրտում Զուղայեցիէ, Եղոկիա: Մաղկող՝ Միքայէլ: Ստացողը՝ մահտեսի Առաքել եւ մահտեսի Բաղդասար. - Զեռ. Ս. Յ., թ. 3156

6. - Մաշտոց, 1697, Եւդոկիա: Գրիչ Գէորգ, «զարմ տէր Բարաղամի եւ քաջ զրագրի»: Շաղկող՝ Միքայէլ որդի տէր Բարղամ զրչի: Ստացող՝ Իշնատիս Սրբեպս: Եւդոկիացի: - Զեռ. Ա. Յ., թ. 2285:

7. - Յայսմաւուրը, օրինակած է Երեւանցի Գրիգոր զրիչ 1698ին, Էջմիածին: Մաղկումը կատարած է Միքայէլ 1700ին, Թոխաթ: Ստացող՝ Նահապետ Կթղ. Էջմիածնի: - Զեռ. Ա. Յ., թիւ 1918:

Ա Ս Ո Ւ Ա Մ Ա Տ Ո Ւ Բ Ե Կ Դ Ա Ւ Ց Ի

(1650? - 1705?)

Ժէ. Դարու վերջին քառորդին Եւդոկիոյ մէջ գործող արդիւնաւոր անձ մրն է Աստուածատուր քահանայ, որ յայտնի էր իրրիւ զրիչ, ծաղկող եւ կազմող: Ծնած է Ժէ. Դարու կիսուն հաւանաբար: Ան որդին էր Եւդոկիացի զրիչ եւ ծաղկող Մկրտիչ Երէցի, որմէ եւ սորված է գրչութեան արուեստը: Իր զրչական աշխատանքէն, որ տեւած է քառորդ դար (1679 - 1703), կրնանք յիշել հետեւեալները:

1. - Ճաշոց, զրուած եւ ծաղկուած 1679ին, իր հօրը ծեռքով, զըր կազմած է Աստուածատուր: Ստացող՝ մահտեսի Կիրակոս: - Զեռ. Երեւանի, թիւ 10356:

2. - Աւետարան, զրած, ծաղկած եւ կազմած է 1686ին, Փուխուրուտ զիւղին մէջ: Ստացող՝ Բարսեղ վաճառական: - Զեռ. Երեւանի, թիւ 5:63:

3. - Աւետարան, օրինակած է 1686ին, Տաշնէրտիփանի (Եւդոկիա) Ա. Ստեփանոս Եկեղեցին: - Ցուցակ Զեռ. Վասպուրականի, Ե. Լալայեան, էջ 965:

4. - Աւետարան, զրած եւ ծաղկած է 1699 - 1700ին: - Զեռ. Ա. Յ., թիւ 2634:

5. - Յայսմաւուրը, օրինակած է շուրջ 1701ին: Ստացող՝ Պապ, որդի Մելքոնի: - Զեռ. Chester Beatty Library, թիւ 604:

6. - Յայսմաւուրը, զրած եւ ծաղկած է 1703ին, Տաշ-Ներտիւանի Ա. Ստեփանոս Եկեղեցին: Ստացող՝ Աստուածատուր Վարդապետ: - Զեռ. Ա. Յ., թիւ 6:

Գ Ա Յ Բ Ր Ի Է Լ Դ Պ Ի Բ

(1650? - 1712)

Կ. Պոլսեցի յայտնի մանրանկարիչ Մարկոսի որդին էր Գարրիէլ Դպիր, իր

կարգին դարձած յայտնի զրիչ մը եւ մանրանկարիչ մը նոյն քաղաքին մէջ: Ծնած է Ժէ. Դարու կիսուն մօտաւորապէս: Հօրենական արուեստին սկսած է հետեւիլ պատանեկան տարիին եւ շուրջ կէս դար (1667 - 1712) վաստակած է որպէս զրիչ եւ ծաղկող: Իր շիրիմը կը գտնուի Պալըզլրի Հայոց գերեզմանատան մէջ: Բնաւուր տաղանդով օժտուած նկարիչ Գարրիէլ Դպիր վաստակէն ծանօթ են վեց ծեռագիրներ:

1. - Գիրը Հարցմանց՝ Գրիգորի Տաթեւացոյ, օրինակուած 1667ին, Կ. Պոլսոյ մէջ: Աէկ մասը զրած է ներսէ Դպիր: Գարրիէլ Դպիր ծաղկած է եւ նկարազարդած: Ստացողն է Նմաւոն (Տաճնազար) սարկաւագ Ազուլեցի: - Զեռ. Ա. Յ., թ. 205:

2. - Ասղմոս, 1672ին, Ստամպոյի մէջ զրած եւ ծաղկած է ինքն իրեն համար: - Զեռ. Ա. Յ., թիւ 1596.

3. - Հաւաքածոյ՝ Պատմութիւն Աղեքսանդրի, օրինակուած 1694ին, Կ. Պոլսոյ մէջ: Աղեքսանդրի Պատմութեան Նկարազարդող՝ Գարրիէլ Դպիր. - Զեռ. Վիեննայի Մխիթարեանց, թիւ 319:

4. - Աւետարան, օրինակուած Խաչատուր Դպիրի ծեռքով, 1695ին, Կ. Պոլսոյ մէջ: Նկարազարդող՝ Գարրիէլ Դպիր:

5. - Խորհրդատեսոր, օրինակուած Պետրոս Դպիրի ծեռքով, 1703ին, Կ. Պոլսոյ մէջ, Զեյթունցի Կարապետի համար: Մաղկող՝ Գարրիէլ ծաղկարար. - Զեռ. Երեւանի, թիւ 392:

6. - Խորհրդատեսոր, օրինակուած Կ. Պոլսոյ մէջ: Մաղկող եւ նկարազարդող՝ Գարրիէլ: - Զեռ. Ա. Յ., թիւ 2270:

ՄԱՆՐԱՆԿԱՐՁԱԿԱՆ ԳԱԽԱԶԱՆԱԳԻՐ

Մեր միջնադարեան զրիչներն ու մանրանկարիչները առ հասարակ բարի սովորութիւնը ունեցած են իրենց զրած յիշատակարաններուն մէջ յիշելու նաև իրենց ուսուցիչներն ու աշակերտները: Այդ տեղեկութիւնները կարելիութիւն կու տան մեզի կազմելու կարգ մը գաւազանագրեր մեր մանրանկարիչներուն եւ ծաղկողներուն անունով:

Այստեղ իրեւ փորձ կը ներկայացնենք 11 անձերու կամ սերունդներու շղթայ մը,

որ կ'երկարի ժԴ. Դարու վերջերէն մինչեւ ժէ. Դարու երկրորդ կէսը, այսինքն Կրիգոր Տաթեւացիէն (1378) մինչեւ Մկրտիչ Բերիացի (1658):

1. — Գրիգոր Տաթեւացի, Աւետարան մը, գրուած 1297 թուին, նկարազարդած է 1378ին. «Աւետիք Աստուածածնի, Գրիգորի ծծուամբ, սպասաւորի բանի, Յոհաննու Որոտնեցւոյ աշակերտի, նկարեալ». — Զեռ. Երեւանի, թիւ 7482: Յիշատակարանք ժԴ. Դարի, թիւ 635:

2. — Մկրտիչ Օրբելինց, աշակերտ Տաթեւացի Գրիգորի, օրինակած է Աւետարան մը, 1420ին, որուն յիշատակարանին մէջ կ'ըսէ. «Աղայիմ յիշման արժանի առնել զանդիտան ցրիս եւ զծնողսն իմ՝ զօրպէլ եւ զ'եռվլաթ»: — Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, թիւ 268:

Աւելի նորը, 1432ին, կը գրէ. «Աղայիմ յիշել ։ ։ ։ զնոգեւոր որդեակն իմ զՄինաս Դպիրն, որ զգիրս [Մաշտոց] ծաղկեաց»: — Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, թիւ 455:

3. — Մինաս նկարող (1415?—1485?), որդի Մաղթումի, աշակերտ Օրբէլինց Մկրտիչ Վարդապետի:

4. — Կարապետ Քերկրցիի 1473ին օրինակած Աւետարանին մէջ կը կարդանք. «Աղայիմ զծեզ ։ ։ ։ յիշման արժանի առնել ։ ։ ։ զնոգեւոր հարքն մեր զՊետրոսն եւ զտէր Մինասն՝ զուսուցիչն իմ եւ զվարպետքն իմ, որ բազում աշխատանք եւ երախտիք ունին ի վերայ մեր»: — Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մասն, էջ 353:

5. — Ցովսկի Ազրամարցիի 1497ին օրինակած Շարակենցի յիշատակարանէն կ'առնենք հնեաւեալ տողերը. «Այլ եւ աղայիմ յիշել ի Տէր զնոգեւոր հայրն եւ ըգկրկին զծնաւողն իմ յիմաստս զտէր Կարապետ Քերկրցին, որ բազում աշխատութեամբ ուսոյց մեզ զարուեստքս՝ զշինել մագաղատիս, եւ զգրել սորին, այլ եւ ըզնկարելն ։ ։ ։»: — Յիշտ. ԺԵ. Դարի, Գ. Մասն, թիւ 328:

6. — Սուրբի Էանանայ (1500?—1572?), որդի Կարապետ քահանայի եւ Քնարի, ամուսին Խանումի, աշակերտ Աղթամարցի Ցովսէփի:

7. — Սարգիս քահանայի եւ Խանումի որդի Սարգիս Հիգանցիի 1601ին գրած եւ ծաղկած Շարակենցի յիշատակարանին մէջ կը կարդանք. «Աղայիմ յիշել ի Տէր ։ ։ ։ զծնողսն իմ, զտէր Սարգիս վարպետն եւ զնանումն եւ զեղբայրն իմ զտէր Մարտիրոս վարպետն, որ աշխատեցաւ հնետ անարժանիս ի յուսումն եւ ի յարուեստ ուսեցնելն»: — Ցուցակ 26ո. Ս. Յակոբեանց, Ե. Հատոր, 1971, էջ 513:

8. — Զեյրունցի Վահան Էանանայի 1596ին գրած եւ ծաղկած Աւետարանին յիշատակարանէն կ'արտազրենք քանի մը տող, ուր կ'աղայէլ յիշել ։ ։ ։ առաւել տէր Սարգիս վարպետին Հիգանցոյ՝ այսմ արուեստի ուսուցողի»: — Ցուցակ 26ո. Հալէպի, 1935, էջ 30:

9. — Զեյրունցի Յակոբ սարկաւազի 1602ին գրած եւ ծաղկած Աւետարանին յիշատակարանին մէջ կան յստակ տողեր, այսպէս. «Դարձեալ աղայիմ յիշել ի Տէր զյուսուցիչն իմ զԶէթունցի Վահան երէց քաջ քարտուղարն, եւ զՀիգանցի Մարտիրոս վարպետն, որ ուսոյց զոսկուն բանեցնելն»: — Ցուցակ 26ո. Հալէպի, էջ 81:

10. — Վազար Զեյրունցիի 1619ին օրինակած Սաղմոսին յիշատակարանէն կ'առնենք քանի մը տող. «Յիշեսացիր ։ ։ ։ եւ զուսուցիչն իմ, զտէր Վասիլ վարպետն, եւ զՅակոբ քաջ քարտուղարն, եւ որ բազում աշխատութեամբ աշխատեցան յուսուցանել զանարժանս»: — Ցուցակ 26ո. Հալէպի, էջ 122:

11. — Քերիացի Մուրեաս (ապա Մկրտիչ Էանանայ) 1642ին իր օրինակած Մաշտոցի յիշատակարանին մէջ գրած է. «Աղայիմ յիշել ի Տէր զՂազար քահանայն, որ է հայրն իմ եւ ուսուցիչ, որ զամնայն աշխատանօր ուսոյց ինծ զպատուական արհեստս»: — Ցուցակ 26ո. Հալէպի, էջ 154:

Այսպիսի գաւազանազրեր պիտի օգնեն ճշդելու հայ մանրանկարչութեան կեղրուներուն գործունէութիւնը եւ անոնց կողմէ կատարուած ազդեցութիւնները իրարու վրայ:

Ն. ԱՐԲ. ՇՈՎԱԿԱՆ

(Վերջ՝ 15)

ՅՈՒՇԱՊԱՏՈՒՄ

↔ ↔ ↔

Մասնաւոր աշխատանք կը տարսուէր վասպուրականի 1915 ի գաղթէն յիշայ, որ կովկաս և Պարսկաստան ապաստանզները երկիր վերագտանային, լեցնելու համար ամայացած երկրամասերը ապագայի յոյսով և հաշիւներով՝ վասպուրականի մէջ տակաւ կը կազմուէր բռու մը հայութիւն և մուս հազիւ զգալի իշխանութիւն մը: Հօն էին նաև կոստի Համբարձումանը, Պուլկարացի Գրիգորը, Լեռն Շաղայեանը, Տիգրան Բազդատարանը և ուրիշներ: Ասոնց մատհոգութիւնն էր շարունակիլ մեալ երկրին մէջ և սպասել գարնան, յոյս ունենալով որ մուս բանակի և Հայ կամաւորներու յաղթութեան պարագային ժողովուրդը կը վերադառնար:

1916 ի գարնան, Կորինը գրաւուած էր կամաւորներն իւսուս-տաճկական հակասը բաւական հեռացած էր այժմ վանի սահմաններէն և կարելի էր յոյս ունենալ վասպուրականի մէջ վերաշինարարական աշխատանքներ կատարելու: Այս մատծումը ընդհանուր էր: Նոյն մատհոգութիւնը ունի նաև Երևանի Արևմտահայ Փախատական կեդրոնական Մարմինը, որ դուրս եկած չՓաղթական հոգերասութենէն, աւելի լայն գործունէութեան ծրագիրներ որոնմալու կը նկրտէր: Ասոր համար անհրաժեշտ էր բանալ իդարի-վան գիծը, ապահովելու գաղթողներու վերագրածը:

Եթէ Հայաստանի հիւսիս-արևելեան ընտական սահմանն ու ամուր կռուաններն են Ղարաբաղն ու Սիւնիքը, անոր արևելեան և հարաւային սահմանը վասպուրականն է: Այդ զոյգ երկիրներու միջոցով է որ Հայաստանը իր ամբողջական կերպարանքը կ'առնէ ու կը պաշտպանուի ընտական ամբութիւններով: Եթէ ուզնեք ապահով Հայաստան մը ունենալ, ատիկա անհնար է առանց վասպուրականի: Երբեկայ Խորհրդագային Հայաստանը կոմմ Արքատական աշխարհը, առանց վասպուրականի և Ղարաբաղի, Ճիարչաւի կրկէս մը ն

է: Յայտնի է մեր պատմութենէն որ վասպուրականը նզած է միշտ ամենէն ուժեղ և զարդացած իշխանութիւնը, Հօն է որ Հայկ Նահապետը, ըստ աւանդութեան, նետահար դիտապաստ ըրած է Ասորեստանի Բէլը: Առասպեկտական Մհերը թաքնուած է Ակոսիի քարայրին մէջ, իսկ Արա Գեղեցիկը՝ Առաջեղի: Շամիրամի առուն դարերէ ի վեր կ'առազէ վասպուրականը, որ իր ճարտարագիտութեամբ ու հնութեամբ իր հ և ասարը չունի:

Այս էր գիխուսոր պատճառը որ այդ օրերուն, հայ և օտար ընկերութիւններ վան վերադառն զաղթողները իրենց հոգին կապելու աշխատանքին էին լծուեր, հայթայթելով անսոնց լծկան, սերմացան և գործիքներ: Վանի նոր զեկավարներն ու ժողովուրդը, պահ մը մռացած անցեալի գժնդակ իրադառնուները, ժրպատագին կը բաւարարուէին ի տես մեր ժողովուրդի հայրենադարձին: Հայք զաղթող ժողովուրդ չէ, անիկա զոնն է իր վրայ խուժող և զինքը իր երկրէն զերեվարազ բարբարասներու, Սելճուքներու, Շահ Արածներու և նմաններու: Մհերք չենք գաղթած դրամ գիգելու, քաղաքական նուռածումներ ընելու դիտավուներով, դրժիմմ ճակատագրի և անբնական դասուուրումներու հետեւանքով: Հայք զաղթող չէ, ան խորապէս կապուած է իր հազին և իր նախնիքներու ժառանգութեան: Հասկնալու համար այս իրողութիւնը, պէտք է նայիլ Անիի աւերակներուն, մեր հազարաւոր եկեղեցիներուն և վանքերուն, հոյակապ Աղթմամարին և նմաններուն:

Հետագային վասպուրականը պիտի զարգացնէր իր ինքնատիպ մշակոյթը, պատմութիւնն ու Եկեղեցին: Աղթմամարը պիտի գառնար փաքրիկ էջմիածին մը, վարագը պիտի հակադրուէր Ա. Կարապետի, իսկ Նարեկայ վանքը՝ Սիւնեաց Տաթեէին: Հայաստանի ոչ մէկ վայր ծածկը ու այսօքան վանքերով և արուեստի ու գիտութեան ամհարսներով՝ որքոն Արքուննեաց և Ծշտունեաց երկիրները, վասպուրականցին ինքնուրոյն արտեստագէտ է մինչև այսօք: Ան մտքի թագաւորներ ու տուու, նման Նարեկացիին և Քուչակին: Վասպուրականի հարցը

միայն Վասպուրականցիներու ապահովման խնդիրը չէ, այլ ընդհանուր հայկան:

Պատմութիւնը կը կերտուի բարոյական և հոգեկան ճիգերով, իսկ արուեստը՝ տեսիլներով։ Պատմութիւնը ժողովուրդի մը գոյութեան փաստն է, իր հայրենիքին պաշտամունքը։ Գաղթականի հոգերուսութեամբ տագորուած ժողովուրդ մը չի կրնար պատմութիւն և արուեստ ստեղծել։ Գնչուն պատմութիւն չունի, ոչ առ վաշկառունը՝ հայրենիք։ Արարտեան աշխարհի այս խորհրդաւոր երկրին մէջ, ուր ամենահին աւանդութիւններու համաձայն մարդկաւթիւնը գոյութեան եկած է, չուրջ 2500 տարիներէ ի վիր հայրեն հաստատած էին իրենց բնակութիւնը։ Այս կուռ և հոկոյաձև լուսներուն մէջ է որ հայ ժողովուրդը հողին կապուած՝ կազմած է իր ազգութիւնը։

Մեր նախնիքներու երեակայութեան մէջ Արարտը համարուած է գերբնական ուժի հրաշալի մէկ գործը։ Ան նուրիտական եղած է, բնակագայր ոգիներու, ուշիք կոչուած են Վիշապազունք։ Առուածային ձեռքերով կերտուած այս լեռը հակադրութեան գրուած է առասպելական աշտարակին հետ, զոր մանկանացուները փորձեցին երկինք բարձրացնել։ Այն վայրեկանին՝ երբ Արեւելքի մէջ երկինքը կը սկսի վառի արշալոյսի յառաջընթաց հուրով, երկնքի վրայ արիւնագոյն կարմիր չերտ մը կ'երեի, որ կը ստանայ հոկայ նետի մը ձեւը։ Ան Մեծ Արարտի ձիւնապատ կոտարն է, որ արեւու առաջին ճառագայթներուն տակ ծիրանագոյն կը ներկուի։

Հայկական լեռնագաշտի գիրքը ո՞չ միայն կ'ազդէ անոր կիմային և հողին պարզեած արդիւնքին՝ այլ նաև քաղաքական և զինուուրական արժէքի ահամեկով։ ալ իր ժողովուրդին մասնաւոր առաւելութիւն մը կ'ընծայէ։ Հայուսանը ինքնիրմով կը կազմէ իսկական ամբոց մը, որ կ'իշխէ առաջաւոր Ասունց՝ ինչպէս նաև Եփրատի և Տիգրիսի ճանապարհներուն։ Այս հոնքամանքները դարերով դրացի պետութիւններու ախորդակիը զըրգած են, տիրանալու այս միջնարերին։

Հայուսանի անկախութիւնը ապահովելու համար, Հայ ժողովուրդի մզած մշտական պատերազմները, միանալով երկրի խիստ կիմային, հայերը ըրած են ռազմիկ և կորովի ցեղ մը, ինչպէս նաև զիմոցկուն և քաջ՝ անոնք ուժեղ կերպար կապուած են իրենց հողին և իրենց ազատութեան, որուն համար շատ արիւն թափած են։

Եթէ 1917 թուականը նշանաւոր եղանակարհի պատմութեան մէջ Ռուսիոյ յաղագիսաւութեամբ, վասպուրականցին առ կրնայ պարծենաւ իր, թէև առժամեայ, անկախութեան փորձով, նորէն ստանձնելու իր ճակատագրի տնօրէնութիւնը, ցուցնելու աշխարհի թէ գիտէ պահել իր պապենական ժառանգութիւնը եղազ ազատութեան ոգին, և իր կեանքի գիսով պաշտպանելու իր մայրենի հողը, եւ վասպուրականը գարանի մատած առ իւծի նման կազմ ու պատրաստ՝ ակնդէտ կը սպասէր յարմար առիթի, իր ազատութիւնը վերագտանելու համար, Ռուսական յաղագիսաւութիւնը սպասաւութիւնը առ իւծի յարմար առիթի, ու առ իւծի յարմար առիթի, իր նոր կառավարութիւնը և Թուրքիան, իրմէ խլել փորձելու այն՝ զոր պատերազմի նախօրեակին զրաւելու շնորքը ունեցած էր։

Վասպուրականի ժողովուրդը, Պոլշեւիկան շարժումն իսկ տակուին չակսած, Ռուսական յաղագիսաւութիւնէն քաջալիքը աւած։ Ապրիլ ամսուն, Կավկասի Հայոց Բարեկարձական Ընկերութեան գրասենակին մէջ խորհրդակցական ժողով մը կը գումարէր, իր ապագային մասին խորհրդական շարժմը տապալած էր, յաղագիսաւութեան նոր կառավարութիւնը ազգերու ինքնորոշման կազմակից ըլլալ կը թուէր, ինչու ուրիմի վասպուրականցին չունենար կազմակերպուած մարմին մը, որ զրազէր իր ներքին կազմակերպութեամբ կը կազմուէր մարմին մը՝ որ անուան զանազան փափախութիւններէ յետոյ Շլրջանային Վարչութիւն անունը կը կրէր, կազմելով վասպուրականի վաղանցուկ կառավարութեան սաղմը։ Շրջանային վարչութեան անդամներն էին կոստի

Համբարձումեան, Գրիգոր Օհանջանեան, Բժիշկ Տէր Թովմասեան, Սամուէլ Մեսրոպեան, Արմենակ Մաքսապետեան, Սեղմաք Փանոսեան և Բարունակ Կապոցիկեան, Ասոնցմէ զատ Աւետիս Թէրզիպաշեան, որ այդ օրերուն Վանի քաղաքագլուխն էր, և Դանիէլ Վարդապետը,

1918 թուի Յանուարի 6-ն էր: Զիւնի հաստ շերտ մը ծածկած էր Վասպուրականի սարն ու քարը: Այզեսատանի և Վանի այրուած եկեղեցիներու զանգակները իրենց երկարաշառնչ և խորհրդաւոր դօղանցներով եկեղեցի կը հրաւիրէին ժողովուրդը: Ծննդեան առաւօտն էր և ժողովուրդը իր դրաւար բարեպաշտութեամբ եկեղեցի կ'երթար: Եկեղեցի դրան առջև՝ շարքով կոսկնած էին երկու վաշտ հայկական առաջին զինուորները: իրենց համազգեստով ու զինուուծ: Անկախ Վասպուրականի անդրանիկ զինուորներ: Պատարագէն վերջ եկեղեցական թափօրը կը յառաջանար դէպի զետակը ու հոն, զոյգ դրօշակներու միջև, աղաւնիի սոկեզօծ կտուցէն միւսոնի կաթիւները կ'իջնէին գետին մէջ: Ազատ Վասպուրականի առաջին Զօրօհնէքն էր որ կը կատարուէր:

Կովկասի հետ յարաբերութիւնները երթալով կը դժուարանային: Միւս կողմէ բանակ կազմակերպելու համար դրամի անհրաժեշտ կարիք կար: Այս կացութեան առջև, կոմիսարներու Խօրհուրդը կը ստիպուէր տեղական գործածութեան համար հրաժարակել փոխադրերու նման թղթադրամներ: Ամբողջ բնակչութիւնը, երիտասարդ թէ ծեր, գործի լծուած էր: Ունուրութեան ալիքները մեծերէն անցնելով թափանցած էին 10-12 տարեկան փոքրիկներու սրտերուն մէջ, փոթորկելով անոնց հոգիները: Արտամէտ գիւղը նատախցի յիսուն փոքրիկներ՝ մէկ մէկ փայտ ուսերնուն դրած, և Մեր Հայրենիք երգելով, ժողովարդի ծափերու մէջէն զօրանոց կու գային պահանջելով որ իրենց ալ զէնք տրուի: Այս տաղերը գրազը մաս կը կազմէր այդ խումբին:

Մարտ ամիսն էր, գարնանամուտի ամիսը: Վասպուրականի դաշտն ու լեռը ձմեռուան թմրութենէն արթնցած, նորաբողով ծիլերու կանաչ վերաբերուն հա-

գած, գարնանամույր զեփիւոի համբոյր-ներէն զինովցած, կը հրաւիրէին հողագործը դաշտի աշխատանքին: Զիւնհալը սկսած էր, Վարտագայ սարը կուրծք ու աեցուցած կը դիտէր բիւրուուր վտակները, որոնք կարկանելով վար կը սահէին իր կողերէն: Միծեռնակն ու արտայտը իրենց քաջցր ճառուղիւններով կը ճախրէին օդին մէջ: Գարնանամուտ . . . ամէն կողմէ հրաւիր կը կարգացուի աշխատազ ձեռքերուն, որոնք սակայն լուս էին ու անհետաքրքիր: Խօզազ աշխատանքին յաջորդած էր քանդող պատերազմը: Երէկի անխոնջ գիւղացին, մէկդի դրած իր այնքան սիրած արօրը, իր ձեռքը մահառիթ հրացանին էր երկարած:

ՆԱՀԱՆՁԻ ՍԿԶԲՆԱԿՈՐՈՒԹԻՒՆԸ

Կարնոյ անկման լուրը ծանր էր: անոր պիտի յաջորդէին Առնիսի և Ռոտոնի պարտութիւնները: Այդ ծանր օրերուն, իշխանութեան անդամները ընդհանուր ժողովէ մը յետոյ նահանջի որոշումը կուտային: Երեկոյեան մութին, պատերուն փակցուած նահանջի յայտարարութիւնը անակնկալ մը եղաւ ժողովուրդին համար, որ կը հարկադրուէր չուտով մեկնիլ և գիշերէն վերջ հասնիլ թիմար գաւառի Զանիկ գիւղը, Վանէն 50 քիլոմէթր հեռու և անակնկալ մը եղաւ ժուր մը: Քիւրեմբը գրաւած էին Ենրէկրի ձորը: 1915 ի մեծ նահանջը իր սարսափով կը կենդանուոր շտաբերու հոգիին մէջ, որոնք երեք տարիներ առաջ անցած էին այդ գժախտային կամուրջէն: Ենրէկրի կիրճը թշնամիի կողմէն գրաւած էր: հազարաւոր թըշնամիներուն հերոսարար կուրծք տուող վասպուրականցին, խուճապի մատնուած, կը սոսկար զեր երկու օր առաջ իր արհամարհած թշնամիէն:

Զանիկի ազրիւրին քով, երկայականի տան մը առջև խռնուեր էր ժողովուրդը: Հոն դոնփակ նիստ ունէին Վասպուրականի ճակատագրին մասին մտածող կոմիսարներու Խորհուրդը: Եւ ժողովուրդը աչքերը ազատարար դրան գամած՝ կը սպասէր չնչանատ: Հեծկլառուքով կը բացուէր դուռը և զինուորական համազգեստով մէկը կ'իրեւար դրան առջև, տալու

Ա Ղ Թ Ա Մ Ա Ր

Առանձնակի տեղ կուտայ Աղթամարին Լիդիա Գուրնովուն, Ան ևս կը բաժնէ ընդհանրացած կարծիքը համակարգի վաղ քրիստոնէական նիւթերու կրկնութեան և տեղական, առարկայական, երկրորդական նշանակութեան մասին: Իրաւացի է ան, երբ կը նշէ որթագալարի գոտիին մէջ աշխարհիկ նիւթերու գերակայութիւնը, սակայն հիմնովին կը սխալի, երբ գլխաւոր գոտիին վեր տեղաւորուած զօրաւոր ելուստ ունեցող քանդակաչարը կը սեպէ խորթ տաճարի պատկերագրական համակարգի բերուած, և հեթանոսական ամբոցի, որուն քարերը Գագիկ Արծրունին օգտագործած էր տաճարը կառուցելու համար: Աղթամարի բարձրագանգներուն անդրադարձած են շատ հետազոտողներ, և չենք կրնոր նշել ոչ մէկ հայկական միջնադարեան կոթողական արուեստի նուիրուած աշխատութիւն, որտեղ այս կամ այն առիթով խօսուած չըլլար Աղթամարի պատկերագրական արուեստի մասին: Աղթամարի տաճարը և յատկապէս անոր պատկերագրանդակները տեղ գտած են նաև արտասահմանեան շարք մը հետազոտողներու գործերուն մէջ: Սակայն, բացի

Սիրաբի Տէր Ներսէսեանի գործերէն, խիստ դժուար է գտնել թէկուզ մէկ հետազոտութիւն, ուր հայկական արուեստի այս հոյակերտ կոթողը ստանար իր որժանի գնահատականը և հանգէս գար որպէս հայկական մշտկոյթի անբաժանելի մէկ մասը: «Սկզբնազրիւրներու» որոնումները հեղինակներուն կը տանին հին Ասորեստան և Եղիպտոս, Կեդրոնական Ասիա և Պարսկաստան, մինչև իսկ Խուման և Թրական արուեստին, չըսկու համար որ շատերը զայն կը սեպէն Բիւզանդական արուեստի արևելեան դպրոցի մը արտայայաւութիւնը:

Այս ընդհանուր հոսանքէն կը բաժնըրեի Մ. Դպիրոզյուի աշխատութիւնը, թէև այսեղ ևս ամէն ինչ կայ, բացի հայկական արուեստի հնաւանդ նախագրեալներէն: Ատոր հետ միասին հեղինակը կը փորձէ բացատրել Աղթամարի պատկերագրանդակներու տեղաբաշխումը լուսաստուերային փոփոխութիւններով, կապուած արևի շարժման և վերջինիս բարձրութեան հետ: Հեղինակը կը նշէ բարձրագրանդակներու կատարման մեծ գարպետութիւնը, իսկ կառուցուածքը

Արամազդեան պատգամը սպասող ժողովուրդին «Զինուած ձիւսորներ՝ շաքքի, իսկ ժողովուրդը, ճերմակ դրօշակ պարզած, թող վերադառնան իրենց տեղերը և յանձնուինց: Ահաւոր փոթորիկ մը ծայրը տուաւ: Ժողովուրդը բաժնուիլ իր սիրելիներէն, որոնց գոյաւթեան համար էր որ տարիներով Ռատանի և Առնիսի ձիւսածածկ խրամներու մէջ կուրծք տուած էին թշնամիի գնդակներուն, կը բռնէր Լիմ անտապատի ճանապարհը, յանձնելով ինքնինքը ճակատագրի անօրինութեան:

Զարագուշակ չէնքի պատին տակ կանգնազներէն մին ալ հայրս էր: Երբ վերագրածաւ՝ փրփուր կար իր բըթներուն և

բերանը լիցուն էր հայնոյանքներով: Հայրս և մայրս համաձայնեցան Լիմ կղզին գացողներուն ընկերանալ երբ մօտեցանք ծովուն, նաւակը արգէն ծանրաբեռնուած էր մեկնողներով և պիտի վերադառնար նարեր տանելու: Ես երբ տեղեակ եղայ հօրս և մօրս կղզին երթալու մտադրութեան, յանկարծ ասրօքին պատին զգացումով լիցուեցայ և գետին պառկելով մերժեցի նաւակավ կղզին երթալ: Հայրս և մայրս պահ մը մնացին զարմացած, յետոյ մայրս ըստու: «Դուցէ Աստուծոյ ազգաբարութիւնն է որ կը տրուի մեզի այս անմեղի միջնոցու: Եւ երբ նոււակը վերագրածաւ նարեր տանելու, մենք արգէն հեռացած էինք ծովեղրէն:»

ըսդհամբապէս որպէս ճարտարապետութեան և քանդակագործութեան հիմնադրման ուշագրաւմէկ նմոյշը: Աղթամարի պատկերագրական համակարգին անդրադասման ենք մենք, փորձելով բացայացած պատկերագրական համակարգը: Ազգագունքային նորութիւնը հայ արուեստի պատմութեան միջև պայմանաւորուած էր այն պատմութաղաքան իրադրութեամբ, որ ստեղծուած էր Հայաստանի և յատկապէս Վասպուրականի մէջ, թ. - ժ. դարերու սահմանագլխին:

Սակայն, անոր հետ միասին, թէ՛ ընդհանուր համաչափութեան, թէ՛ առանձին նիւթերու և առարկաներու պատկերագրութեան հարցին, Մանուէլը և անոր հետ աշխատող միւս վարպեսները հանդէս կու գան նախորդ դարերու ինչպէս հայ այնպէս աւ Սասանեան արուեստի մէջ ընդհանրացած ձեերու հիմնալի իմացութիւնը, Աղթամարի մէջ իր ցայտուն արտայայտութիւնը կը գտնէ թ. - ժ. դարերու սահմանագծին հայ արուեստի մէջ կազմաւորաւող ոճական այն նոր ուղղութիւնը, որը կէս դար յետոյ արդէն ճարտարապետութեան ընտագաւուառին պէտք է մարմնաւորէր Անիի քաղմաթիւ հոյակերտ կառոյցներու մէջ: Համանման չեն մշակուած տաճարը շրջանցող գտնիները: Առաջին հիմնական գոտին մօտ երկու մէթը բարձրութեամբ հարթագունդակներու շարք մընէ, որ սկսելով արեմտեան ճակատէն, կը շրջանցէ կառուցուած քի բոլոր ճակատները: Յաջորդը հնաւանդ խորհրդանիշներու գտնին է, որտեղ պատկերագրանդական քանդակները արտակարգ զօրաւոր ելուստ ունին և կը շրջանցն ամաճարը բոլոր կողմիրէն: Աւելի վեր կը ընթանայ որթառնութեամբ հարթագունդակներու շարժունքի որթառնութեամբ մէջ պատկերացուած են մողովուրդի կենաքէն ամենաստարեր տեսարաններ, թէն հիմնականը այդիի մշակումն է և բնրքի պահպանումը յափշտակողներէն: Աւ աւելի վեր՝ խաչաթելերու և ճակատի պատերուն քիւներու երկայնքով կ'երկարի դիմաքանդակներու, զինանշաններու և տաճանշաններու գտնին, իսկ աւելի վեր՝ թմրուկի քիւնին վրայ, կենդանավագքի գտնին է,

որ կ'ամփոփէ ամբողջ պատկերագրական համակարգը:

Համակարգի համեմատական ուսումնասիրութիւնը ցոյց կու տայ, որ այսանդ հիմնական միտումն էր փառաբաններ Արձրունեաց իշխանական տունը, անոր հախնիքը և թագաւորական տան անդամները, ցոյց տալ անոնց աստուածասիրութիւնը և աւանդը քրիստոնէութեան տարածման, երկրի բարօրութեան և բարգաւաճման գործին մէջ: Այս, ըստ էութեան աշխարհի թէզի մարմնաւորման համար Մանուէլը չունի աւելի վեհ ու յատակ կերպարներ քան Ս. Գրային հանրայայտ նիւթերը: Անոնց հերոսներու մեծագործութիւններուն հետ բազդատուիլ կրնային միայն Արձրունիներու գործերը: Անոր հետ միասին գլխաւոր գօտին կոչուած էր մեծարելու Արձրունեաց նախարարական տունը և Գագիկ թագաւորը: Խաղողի վազերու գօտին պէտք է խորհրդանշէր Վասպուրականի բարւոք կեանքը, իսկ իշխաններու գօտին՝ իշխանական տուններու համեմատիւնը և միամասութիւնը: Մանուէլը կը քաղեր իր կերպարները հայրենի երկրի կենդանի աւանդոյթներէն, իշխանական տոհմային պատմութենէն և ժողովրդային բանահիւսութենէն:

Աշխարհիկ կեանքը և մտածողութիւնը իրենց խիստ սրոշակի կնիքը զրած են համակարգի վրայ, որ ըստ էութեան աշխարհիկ հիմքի վրայ ստեղծուած զատման փիլիսոփայական մեծ գործ է, իրականացուած քանդակի վառ և յատակ կերպարներու լեզուավ:

Տաճարը անոր պատկերագրական համակարգը կը մարմնաւորէ զօրաւոր կեղբանական իշխանութեամբ ունենալու յառաջդիմական գաղափարը, ցոյց կու տայ Արձրունեաց իշխանական տան մեծագործութիւնները այդ ճանապարհին և այն երջանիկ ու խազաղ կեանքին, որուն կը ձգտի ժողովրդը: Պատահական չէ, որ աւատատիրական գաղափարախօսութիւնը արտայայտող կերպարներու կողքին վեր կը խոյանան ժողովուրդի ընդերքէն դուրս եկող հեթանոսական հաւատալիքներու արձագանգը հանդիսացող կերպարներ, ուրոնք առանձնակի շունչ և կենդանաւորթիւնը կը համզարդեն ամբողջ համալիքըն:

Պատկերագրական այս բարդ միջավայրի մէջ շատ հոսանքներ խաչած և ուղած են, սակայն Մանուկի ստեղծագործական որոնումներու ոլորտներու մէջ ամենահիմնականը, գլխաւորը միշտ ալ հայկական միջավայրն էր, հայրենի ժողովուրդի բախտը և անոր կենաս-փիլիսոփայութիւնը:

Պատկերագրական շարքերու սկզբանազրիւները կ'երթան գարերու խորքը, գէպի իշխանական տուններու տաճմապատւմները, գէպի ժողովրդական բանահիւսութիւնը: Սակայն ոճական միասնութեամբ գրսեարուած այդ գոտիներուն մէջ իրենց հեռաւոր արձագանգները գտած են միայն հին արևելին և վաղ միջնադարեան հայկական քանդակի տարրերը, այլև ոյտանեղ առկայ և արդէն նոր կազմաւորուող ոճական ուղղութեամբ բնորոշ շարք մը յատկանչական գիծեր, որոնք գերակի կը դառնան յետագայ դարերուն:

Աղթամարի պատկերագրական համակարգը նոր, փայլուն էջ էր, եղակի երեւոյթ մը, որ ծագեցաւ, մշակուեցաւ ու զարգացաւ որոշակի պատմա-քաղաքական պայմաններու մէջ, և պատահական չէ որ այն անկրկնելի մեայ, այնպէս ինչպէս անկրկնելի էր անոր ստեղծող ժամանակը:

Վերը յիշուած է, թէ Աղթամարի տաճարը մէկ դարէ աւելի է որ կը կազմէ հետազօտողներու ուսումնասիրութեան գլխաւոր առարկան, և բազմաթիւ աշխատութիւններ հրատարակուած են անոր մասին: Սակայն փաստը կը մեայ փաստ, որ Արծրունեաց մայրաքաղաքը, անոր աշխարհիկ կառոյցները, միջնադարերը և արհեստական նուռանագիսար, որ ինքնին հայկական միջնադարեան կառուցողական մաքի փայլուն մէկ յուշարձանախումը կը հանդիսանայ, պարզապէս գուրս մնացած էին ուսումնասիրութիւններու շրջանակներէն, և միայն Յ. Օրբէլիի աշխատութեան մէջ է, որ այդ կառոյցները իրենց որոշակի անդրադարձը գտած են: Մեր կարծիքով, Աղթամարի նուիրուած իւրաքանչիւր գործ պէտք է ընդգրկէ ամբողջ համալիրը, որովհետեմ պալատը, թէ՛ միւս կառոյցները եղակի երեսյթ են ամբողջ միջնադարեան

հայկական ճարտարապետութեան համար ընդհանրապէս: Այդ սկզբունքէն ելլելով, մենք նախ և առաջ կ'անդրադառնանք քաղաքաշիներուն, աշխարհիկ կառոյցներուն, բուն տաճարի ճարտարապետութեան, և յետոյ միայն պատկերագրական համակարգին ու տաճարի սրմանկարներուն:

ԱՂԹԱՄԱՐ ՔԱՂԱՔԸ

ԵՒ ՄԻԶՆԱԲԵՐԴԻ ԿԱՌՈՅՑՆԵՐԸ

Երկրին աւատապետական բաժանումները թ.-ֆլ. գորերուն մեծապէս նպաստեցին առանձին կեդրոններու կազմաւորման, որոնց շարքին էր Վասպուրականի մայրաքաղաք Աղթամարը: Արծրունեաց իշխաններու վաղեմի նպատակն էր սահեծել իրենց առանձին թագաւորութիւնը և հասնիլ ամբողջ երկրին միութեան՝ Արծրունեաց գերիշխանութեան ներքեւ Երկրի աղտազրումը, պետականութեան վերականգնումը Բագրատունեաց կողմէ, քաղաքի գարգացումը և աշխարհիկ մտածողութեան ընդլայնումը էտական հիմքեր էին այդ նպատակին ձգտելու: Իրենց հզօրութեամբ մրցելով Բագրատունիներու հետ, Արծրունեաց իշխանները ջանք չէին խնայեր ճախացնելու իրենց քաղաքները և առաջին հերթին՝ Աղթամարը:

Պէտք չէ մոռնալ որ Աղթամարի հիմնագրման ժամանակ չկային ո՛չ Անին, ոչ ալ երկրին քիչ թէ շատ նշանակալից կեդրոնները, իսկ Բագրատունի թաղաւորները տեղէ տեղ կը փոխադրէին իրենց նստավայրերը: Հազիւ թէ կարելի ըլլայ կասկածիլ, որ Աղթամարը կը հիմնագրուէր որպէս ապագայ մայրաքաղաք, կոչուած ըլլալու ոչ միայն կեդրոն Վասպուրականի, այլև ամբողջ երկրին: Գտնուելով Վանայ լիճի համանուն կղզիին վրայ, այն յուսալիօրէն պաշտպանուած էր, իսկ արհեստական նուռանգիսարը կ'ապահովէր նաւերու անխափան գործութիւնը, նոյնիսկ փոթորկայոյզ օրիրուն: Աղթամարը անմիջապէս չստեղծուեցաւ: Այդ կապակցութեամբ առաջնակարգ հետաքրքրութիւն կը ներկայացնէ Ոստան քաղաքը, որուն շինութիւնը նախորդած է Աղթամարին: Պահպանուած են պատմիչ-

ներու նկարագրութիւնները, Ոստան քառարի մնացորդները, որոնց զուգահեռ վերլուծութիւնը ակնյայտ կը դարձնէ որոշ ընդհանուրութիւններ, որոնք առկայ եղած են Ոստանի և Աղթամարի թէ՝ տեղաբաշխացան, թէ՝ անոնց միջնարերդի կազմաւորման քաղաքացինական սկզբունքներու միջև։ Բայց հիմքերը կան հնթագրելու, որ Մանուէլը աշխատած է Ոստանի մէջ գեռես մինչև Աղթամարը, և ինք եղած է Արծունեաց տան գլխաւոր ճարտարապետը գեռես մինչև մայրաքաղաքի հիմնադրումը։ Ոստան քաղաքի պարատը հանգամանօրէն կը նկարագրէ Անանուն Արծունին, դրեւով այդ ժամանին հնեսեւալը։ Ամբոցի գագաթը ծովահայեաց է և շատ վայելուչ երբ հոգմերէն յուղուած՝ կ'առեկոծի ծովը, անոր տաշկածե ալիքները հաճելի և վայելուչ կ'երեին, իսկ երբ օդը յատակ կ'ըլլայ, բալորին կը գրաւէ՝ իր ծաւալումը տեսնելու համար, որուն պատճառով թագաւորը կը ձեռնարկէ անոր մէջ կառաւցել ապարանքներ, սենեակներ, փողոցներ՝ հրաշալի, պատկերաւոր և պէս-պէս յօրինսուածքով, ինչ որ չեմ կրնար նկարագրել։ Պարիսպով շրջապատուած է նաև ծովի կողմէն զօրաւոր քէմերով, հիմքերը գնելով անհնարին խօրութեան մէջ։ իսկ պարիսպէն վեր և ծովին առջե կը շինէ ճեմադահլիճ մը, զարդարուած սոկեարդ և պէս-պէս ներկերով, յոյժ լուսաւոր աշխերը շոյելու յուրախութիւն իր սրտի և իր արժանիներու, կը կազմէ կամարտէն, օդաբեր, զովացնող զուսեր, միաժամանակ նաև շողարձակ լուսամուտներ, որոնք արեգակի ծագման և մայրամուտի պահերուն փայլատակելով ծովուն վրայ, գահնիճի սրտին մէջ կը նետեն իրենց շողերը և պէս-պէս գոյներով շրջելով դրոշմուած պատկերներն ու յօրինուածքները, կ'ապշեցնեն գիտուններուն։ Պալատական այս կառոյցի նկարագրութիւնը, կառոյց որը անշուշտ կազմած է

Ոստանի միջնարերդի կեղրանը, այսքան մօտ է, այնքան շատ ընդհանութիւններ ունի Աղթամարի պալատի նոյն պատմիչի կողմէն բերուած նկարագրութեան հետ, որ տարակոյա չի մնար անոնց կառուցադական ընդհանուրութիւններու, երկու տեղերուն մէջ ու միկանոյն ճարտարապետի գործունէն մասին։

Աղթամար կղզին, ոչ հեռու լիճի հարաւային ափէն, արտակարգօքէն յարմար էր պաշտպանութեան համար։ Այդ կը վկայեն կղզիի հիւսիսային մասին մէջ պահպանուած կիկլոպեան պատերու մնացորդները, իսկ անմշակ ժայռաբեկորներէն կազմուած պատերը մնացած են նախարարական ժամանակուակներէն։

Վաղ միջնադարուն ևս Աղթամարը կը պահպանէր իր նշանակութիւնը որպէս երկրի նշանաւոր ամրութիւններէն մին։ Պատահական չէ, որ Բիւզանդական Կայութեան դէմ մզուած պայքարի տարիներուն այստեղ ամրացած էր երկրի կառավարի թէողորոս Ռշտունին։ Այս ջրջանի կառոյցներէն ոչինչ պահպանուած է, թէև կասկածի առիթ չի տար որ կրդզիին ամրացուած ըլլալը գեռես հին ժամանակ ևս խթան հանգիստացած է անոնց զօրացնելու և այդ տարածքի վրայ յաւսուլիօրէն պաշտպանուած քաղաք հիմնադրելու համար։

Ամրաշինութեան հարցով ափամերձ կղզիներու օգտագործումը քաջ յայտնի էր, ընդ որում այդ կը տեսնենք նոյն տարիներուն Աևանի մէջ, որտեղ համանուն կղզիին մէջ ամրացու երիտասարդ թագաւոր Աշոտ Երկաթը և այստեղէն սկսաւ իր յաղթարշաւը, ազատագրելու համար երկիրը Արաբներէն։ Աւելի ուշ, նման առափնեայ ամրոցներու կը հանդիպինք կիլիկիոյ մէջ, ուր նաւահանգիստներու մատոյցները կը վերահսկէին ափէն ոչ հեռու կղզիներու վրայ զանուազ ամրոցները (կորիկոս)։

ԱՏԵՓԱՆ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ

(Ճարունակելի՝ 2)

Հ 285 №

Արեւմահայերենի վերածեց՝

ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. ԱՍՈՂԼԵԱՆ

LE TESTAMENT DE NORAYR N. BUZANDATZI

Pour ceux des lecteurs qui n'auraient pas pris connaissance de nos deux articles consacrés à Norayr, géant de la philologie arménienne, parus respectivement en arménien dans la revue arménologique *Bazmavèb* de St. Lazare en 1983, No. 1-4, p. 62-96, et en français dans *Oriens Christianus* de Wiesbaden en 1985, Band 69, p. 194-209, nous rappellerons très sommairement l'homme que fut Norayr, un Arménien d'Istanbul, ancien Mkhitariste de St. Lazare. Tout ce que nous avons écrit et tout ce que nous dirons et publierons ici est tiré des archives personnelles de Norayr, conservées à la Bibliothèque centrale de l'Université de Göteborg en Suède, dont nous remercions la Direction de nous n'avoir rien refusé.

Une famille arménienne de Constantinople, comme on appelait cette ville à l'époque, Ohannès Djismédjian et Houlianée Dzaghiqian, de confession catholique, eut fils le 16 mars 1846 (n. s.), le prénomma Stépane dont voici un extrait de l'acte de naissance, légalisé par Consulat de France et le Consulat Général de Suède et de Norvège dans la ville de Constantinople; il a été délivré en 1899 à la demande de Norayr. Il est rédigé en arménien et en français.

PATRIARCAT
ARMÉNIEN - CATHOLIQUE

Constantinople 1899

N° 281

Certificat de naissance de M. Stéphane (Etienne) Djismédjian (connu depuis 1876 sous le nom de Néandre (Norayr) N. de Byzance).

Nous soussigné déclarons et certifions que d'après les registres de Notre Patriarcat M. Stéphane Djismédjian, fils des époux légitimes Ohannès (Jean) Djismédjian et Julianée (Juliette) (familièrement appelée Foulig) née Zaghighian, et connu depuis 1876 sous le nom de Néandre (Norayr) de Byzance est né à Constantinople le 4/16 Mars Mill huit cent quarante cinq (2845).

En foi de quoi nous avons délivré le présent certificat.

Constantinople, Pétra
le 11/25 Mai 1899.
Avédis Arpiarian
Arch. Tit. d'Anazarbe
Locum tenens patriarchal

Et voici un extrait de son acte de baptême:

PATRIARCAT
ARMÉNIEN - CATHOLIQUE

Constantinople 1899

N° 282

Certificat de baptême de M. Stéphane (Etienne) Djismédjian (connu depuis 1876 sous le nom de Neandre (Norayr) N. de Byzance).

Nous soussigné déclarons et certifions que d'après les registres de Notre Patriarcat M. Stéphane (Etienne) Djismédjian fils des époux légitimes Ohannès (Jean) Djismédjian et Julianée (Juliette) (familièrement appelée Foulig) née Zaghighian (et

connu depuis 1876 sous le nom de Néandre (Norayr) de Byzance) a été baptisé et confirmé selon le rite Arménien Catholique en l'église Cathédrale de Saint Sauveur le 18/30 Mars Mill huit cent quarante-cinq (1845) par le Rév. P. Timothée Aghatchirakan ayant eu pour parrain le Sieur Gomidas Zarpanélian.

En foi de quoi Nous avons délivré le présent certificat.

Constantinople, e 11/23 Mai 1899.

Avédis Arpiarian

Arch. Tit. d'Anazarbe

Locum tenens Patriarcal

Le petit Stépane aura deux frères et trois soeurs, et son père, simple artisan ou ouvrier, a du mal à nourrir toutes ces bouches. En 1854, il envoie Stépane au couvent des Père Mkhitaristes de St. Lazare, "A un moment, écrira plus tard le fils à sa mère, une femme très tendre, où moi-même je ne savais pas et ne comprenais pas ce que je faisais". Et pourtant le P. N. Akinian écrit en 1921 dans *Handès Amsorya*, p. 85: "Il y était allé pour devenir un Mkhitarist".

En 1866, Stépane se laisse ordonner prêtre célibataire. Il avait présenté auparavant plusieurs demandes écrites pour retourner dans le monde, travailler et aider son père, fonder une famille, mais le surveillant des séminaristes avait attisé dans son imagination les feux de l'enfer s'il renonçait, avait fait miroiter la bénédiction éternelle du paradis en compagnie de la Sainte Vierge, avait dévoilé le Mal qui régnait dans le monde hors du couvent. Mou de caractère, le jeune diacre avait consenti malgré lui, car comment oserait-il confesser que "l'aiguillon de la chair", le travaillait plus fort que les discours et le rongeait comme une maladie.

Devenu un beau jeune homme, aux yeux noirs et mélancoliques, grand et débordant de santé physique, n'ayant jamais revu sa famille, Stépane ne rêvait que de la femme idéale que représentaient à ses yeux, naïfs et émerveillés, les portraits de reines et princesses qu'il avait découverts et découpés dans des revues innocentes, dénichées au grenier du couvent. Aucun dictionnaire, aucun manuel de théologie ne pouvait lui faire comprendre le sens exact du mot "concupiscence", ou celui de "chasteté", et il n'avait osé demander à personne pourquoi sur les photos et même en réalité (comme il l'avait remarqué) les femmes avaient le "poitrine élevée". Ses lettres intimes, où il parle franchement de toutes les questions qui l'ont tourmenté pendant des années, sont d'une naïveté poignante. Nous avons publié à Beyrouth en 1986, dans la revue littéraire *Pakine*, une partie de sa confession, décrivant sa vie monastique.

Le jeune moine, *Père Haroutyon Therzontz*, dépérira de jour en jour, Le Père supérieur n'y comprend rien, mais conseillé par un vieux médecin italien ayant bien diagnostiqué le "maladie", l'envoie en mission à Constantinople, afin qu'il retrouve sa famille et voie du mond. Pour s'être placé du côté de "nation", et avoir combattu avec d'autres prêtres catholique le prosélytisme trop ardent du patriarche arménien catholique Hassoun, il est frappé d'interdit d'offices religieux et assigné à résidence comme enseignant et surveillant au Collège Mkhitariste de Kadiköy. Il est plus qu'aigri, et sa "maladie" n'arrange pas les choses. Malgré les conseils d'un médecin arménien, il refuse de rendre visite à certaines "dames", ou de se marier en quittant l'habit. Oui fait, mais de quoi se nourrir? Il accepte dans cet état d'âme l'offre que lui fait un riche commerçant arménien catholique, d'accompagner ses deux fils, comme prêtre, pédagogue et tuteur, pendant leurs études en Suisse et en France. C'est ainsi que le Père Therzontz est à Lausanne et à Paris, nourri, logé et payé, avec une paire de costumes

par an, de 1872 à 1876. Il n'abandonne jamais son dictionnaire français-arménien ancien, entrepris au couvent sur le conseil du Père supérieur.

Pour avoir ramené de Paris à Constantinople son élève cadet tombé malade à Paris, obéissant ainsi au médecin traitant, il est brutalement congédié par son "patron," qui le prive de sa mensualité et lui réclame les frais de ce voyage "inutile," entrepris sans son autorisation! On ne badine pas avec les riches! Le Père Haroutyoun s'endette pour retourner à Paris où il avait quelques économies, et la philologie l'attendait. "Mangeant de la vache enragée (c'est sa propre expression en français dans ses lettres), il s'acharne à achever son dictionnaire; il consulte des manuscrits arméniens à la Bibliothèque Nationale pour rédiger son ouvrage *Haykakan baraknouutyoun* ("Critique arménienne de mots"). Il jette "la soutane aux orties," (l'expression, en français, est de lui) en 1876, se nomme en arménien *Norayr N. Buzandatzi*, signe en français *Néandre de Byzance Norayr. Norayr* et *Néandre* signifient "Homme nouveau... Entre temps, la Congrégation Mkhitariste de St. Lazare l'avait rayé de sa liste. Libéré de toute contrainte, Norayr revoie sa connaissance Mlle. Selma Jacobsson, photographe de la Maison royale de Suède, rencontrée à Paris. Elle l'apprécie énormément.

Norayr rentre à Constantinople au printemps 1879 et cherche à publier son dictionnaire monumental et son petit ouvrage qui demeure un classique du genre philologique. Celui-ci est édité avec ses économies, 128 pages. Il entreprend une campagne afin de constituer une liste minimale de 500 abonnés indispensables à la publication de son dictionnaire. Il passe des annonces dans les journaux, ses quelques amis demeurés fidèles constituent un comité de soutien. Il attend. Il promet son petit ouvrage en prime. Il lui faudrait 10.000 livres ottomanes. Après un an et demi, il n'a que 150 abonnés.

Le 18 juin 1881, Norayr et Mlle Selma Jacobsson se marient à la Chancellerie de la Légation Royale de Suède et de Norvège à Constantinople. Voici une copie du *Pactum Antinuptiale*, fait en français

PACTUM ANTINUPTIALE

Néandre Noraïr dit de Byzance et Selma Ida Jacobsson

Aujourd'hui Samedi

Le Dix-Huitième Juin Mil Huit Cent Quatre Vingt Un, par devant Nous Oscar Gustave de Heidenstam, Chancelier de la Légation Royale de Suède et de Norvège à Constantinople.

Ont comparu en la chancellerie de cette Légation: —

Le Sieur Néandre Noraïr

Littérateur natif de Constantinople et domicilié à Constantinople sujet Ottoman (Arménien Grégorien); majeur et

La Demoiselle Selma Ida Jacobsson, native de Stockholm, Rue de la Reine 80 A. sujette Suédoise, Israélite majeure, libre aux termes de la loi Suédoise de contracter mariage;

Lesquels ont déclaré vouloir contracter mariage et avoir arrêté les clauses et conditions civiles de ce mariage comme suit: —

1° Il y aura séparation de biens entre les futurs époux, qui ne seront point tenus des dettes l'un de l'autre, créées soit avant soit après la célébration du mariage.

2° Les futurs époux jouiront divisément de leurs biens, chacun d'eux conservant le droit de propriété absolue sur tout ce qu'il apporte dans la communauté et chacun

renonçant à toute prétention ou revendication des biens apportés par l'autre. La future épouse conserve par conséquent le droit de gérer, régir et administrer tous ses biens meubles et immeubles sans qu'il lui soit besoin d'une autorisation plus spéciale. —

3^e Les époux se réservent le droit de disposer par testament chacun pour sa part et indépendamment de l'autre, de leurs biens, chacun pour la totalité de son apport à la communauté ou de biens acquis subséquemment.

Cette déclaration ayant force et valeur de Contrat a été fait par les comparants sus-nommés, avant la célébration de leur mariage devant Noue Oscar Gustave de Heidenstam chancelier sus-qualifié et les Témoins sous signés à ce requis et à Nous connus. Fait et signé en double, l'un pour être conservé aux Archives de cette chancellerie, l'autre pour être remis aux futurs époux et servir à ce que de raison les jour mois et an que dessus. [Signé]

Néandre (Norayr) de Byzance

Selma Ida Jacobsson

Georges Abdullah

témoin

Yens Nicolaysen

témoin

O. G. von Heidenstam

Voici les dispositions testamentaires des époux Norayr:

DISPOSITIONS TESTAMENTAIRES des Époux

Néandre et Selma Noraïr dit de Byzance

Les époux soussignés, Néandre Noraïr et Selma Ida Noraïr née Jacobsson déclarent par les présentes avoir pour volonté et arrêter comme disposition testamentaire ce que suit: à savoir;

Dans le cas où il ne naîtrait pas d'enfant de notre union, le survivant d'entre Nous héritera des biens de l'autre et possédera en propriété absolue tout ce qui appartient à la communauté de notre mariage, tant de l'apport des époux que de biens acquis subséquemment, la communauté demeurant indivise et la propriété en entier et exclusive du survivant d'entre Nous. Après la mort du survivant les biens de la communauté seront partagés également entre les héritiers naturels de chacun de Nous selon la loi.

Fait et signé à Constantinople en présence des témoins soussignés ce 30 juin 1881.

Selma Jacobsson N. de Byzance (Norayr)

Néandre N. de Byzance (Norayr)

Yens Nicolaysen O. G. von Heidenstam (témoin).

Capitaine du port. Légation de Suède et Norvège, Constantinople.

N° 29. Vu à la légation Royale de Suède et de Norvège pour légalisation des signatures de Mo. Néandre (Norayr) de Byzance et de Madame Néandre N. de Byzance son épouse, née S. Jacobsson.

Constantinople le 29 Juillet 1881

Le Chargé d'Affaires

O. G. von Heidenstam

MARTIROS MINASSIAN

Université de Genève

(La Suite Continuera)

ԳՐԱԿԱՐԱՎԱՐ

ՀԱՅԵՐԷՆ ԶԵՐԱԳՐԵՐԻ
ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ, Ե-ԺԲԴԴ.

Ուրախութեամբ ձեռք առինք Արտաշէս Ա. Մաթելգունեանի նոր երկը՝ Հայերէն Զեռագրերի Յիշատակարաններ, Ե-ԺԲ. գարերի, Երևան, 1988, որ կոչուած է կարեռ նպաստ մը բերելու հայ բանասիրութեան։

Դիրքը կը բաղկանայ իի + 366 էջերէ՝ հետեւել բովանդակութեամբ։ Հայերէն Զեռագրերի Յիշատակարանները (էջ Ե-1ից), Յիշատակարաններ 1-357 (էջ 1-340), Յանկ Օդատագործուած Ալլրիւրների և Գրականութեան (343-347), Անձնանունների Յանկ (348-360), Տեղանունների Յանկ (361-364), Առարկայական Յանկ (365-366)։

Այս յիշատակարաններուն մէկ մասը ժամանակին հրատարակոււած էր Յազմէփեան Գարեգին Կաթողիկոսի կազմած Յիշատակարանները, որքան որ մատչելի եղած են Հեղինակին, այժմ մէկտեղոււած են մէկ հատորի մէջ, դիւրացնելով բանասէրներու աշխատանքը։

Գնահատելի է յարգելի Հեղինակին եռանգն ու նուիրումը գլուխ հանելու այօպիսի երկ մը, որ դիւրութեամբ իրականացուելիք գործ մը չէ անտարակոյս։

Հատորս կարգալու ժամանակ հանդիպեցանք նկատողաւթեան արժանի զանազան կէտերու, զորս կը ներկայացնենք ստորև յօդուա ընթերցողաց։

1. — էջ 42, տող վարէն 10-9 և ւերկիր պագեալ զիշխանն զաջն նորա, համբուրէր և զերեսն փառաւորս։ Ուղղելի։ և ւերկարագեալ իշխանն զաջն նորա համբուրէր և զերեսն փառաւորս։

2. — էջ 62, ծանօթ. 2. — լուսանցքում այդ բառերի դիմաց գրված է, հա-

վանաբար այլ ընդօրինակողի ձեռքով։ «ի ստուգութենէ հետի էր, թէ ոչ եաք աշխատեալ մեծապէս»։ Դիս։ Զակերտեալ տողերը գրած է հետագայ ստացող Յովհաննէս Քահանայ = Սարկուազ Վարդապետ, որ ծայրէ ծայր սրբագրած է սոյն ձեռագիրը։

3. — էջ 63, Ծնթ. — Մեր Յուցակին մէջ յիշատակարանի վերջում տրուած նիզ տարեթիւը տպագրական վրիպակ է, ուղղելի է Ն.Չ. Ուստի այդ յիշատակարանին ճիշդ տեղը պիտի ըլլոյ 1047 թուականին տակ։

4. — էջ 65, տող բնագրի, վարէն 5. տանձեշութեան։ Ուղղելի՝ տմելութեան։

5. — էջ նոյն, վարէն առաջին տող. սոր յարածամ գեղերիմ յընթեռնուէն իսկ գործ և ոչ փոքր ինչ ժամանակ սահմանեալ որոշեմ։ Ուղղելի՝ որ յարածամ գեղերիմ յընթեռնուէն։ իսկ գործոց և ոչ փոքր ինչ ժամանակ սահմանեալ որոշեմ։ Տես Զեռ. Ս. Յ., թիւ 1238, էջ 390, որ ունի տող մը ևս։ Աւա՞զ թէ ընդ վայր լիցի։

6. — էջ 75, տող բնագրի, վարէն 2. տելողին ի Հաւըք և յլրդույ, ոչ բաժանողին։ Ստորակէտը աւելորդ է և անհարազատ։

7. — էջ 84, թիւ 100. — Երուսաղէմի թիւ 256 ձեռագրի պահպանակին վրայ այդպիսի յիշատակարան չկայ, Հմեմ. Յիշատակարանք Զեռագրաց, թիւ 95։

8. — էջ 91, թիւ 110, տող 7. «աղջախոհակ»։ Յիշատակարանքի մէջ սոր ջախոհակ։ արդեօք ո՞րն է ճիշդը։

9. — էջ 93, տող վերէն 8. «ի ճշգրիտ գաղափարէ յիմաստնոյ ինիշեկ», առն ճարտարի գրչիւ, Ընդգծեալ բառը կը թուր ըլլաւ գրչին անունը՝ ժամկագրեալ, Եթէ այդպէս է կրնայ վերծանութիւ Անանեկ, և նոյնացուիլ Սանահնեցի Անանիա (Անանէ) Վարդապետին հետ։

10. — էջ 93, տող բնագրի, վարէն 15. «զդառնանայոյն շնորհն»։ ձեռագրին մէջ զդառնայոյն։ Ուղղելի՝ զգառնայոյն։

11. — էջ 102, տող վերէն 1. «աղջախոհ»։ Ուղղելի՝ սղալանք։

12. — էջ 104, թիւ 8, վարէն տող 3. «գծաւզ»։ Ուղղելի՝ զծնաւզ»։

13. — էջ 110, տող վերէն 18-23. զգի և ինձ բայց ի . . . հրաժարելոց իմոց ի ծփանաց կենցաղոյ, հասի անելի . . . աժենեցուն . . . ազաւիթւքց: Ուզգելի է՝ զի և ինձ բացցի ։ . . . հրաժարելոյն իմոց ի ծփանաց կենցաղոյոյ, հասի երանելի . . . ամենեցունց . . . ազաւիթւք:

14. — էջ 121, տող վերէն 4. «զամենասն»: Ուզգելի՝ զամենեսեան: Նոյնպէս էջ 166, 195, 213, 239, 252.

15. — էջ 149, տող վերէն 11. «զորիմ կիւրակսի տիպի» և անարժանից: Ուզգելի՝ տրպի:

16. — էջ 173, ծանօթ. 1. «Առւյն Յառաջաբանութիւնը դրված ենք համարում 'ի ԶՃ և Գ' (1154)' թվականից ոչ շատ ուշ և դնում ենք այդ թվաշարքումց: Այդ թուականը շատ կանուխ կը թուի, նկատի առնելով որ խնդրոյ առարկայ «Յառաջաբանութիւնը» գրուած է Նիրսէս Շնորհալիի կենաց աւարտէն, այսինքն 1173 թուականէն ետք:

17. — էջ 195, տող վարէն 10. «երբեքց»: Ուզգելի՝ իբրև:

18. — էջ 197, տող վերէն 10. «և որդւովքն Զարդուանելին, հասանէք նոցաց»: Ուզգելի՝ «և որդւովքն Զարդուանելին. ապա յանկարծակի յետ ամի միոյ անցելոյ, զկնի մահուանն Զարդուանելին, հասանէք նոցաց»:

19. — էջ 223, տող վարէն 15. «ոչ ոք ձեռն հասիցէց»: Ուզգելի՝ «չ ոք ձեռն հաս իցէ»:

20. — էջ 241, տող վերէն 15. «ըստեղծմամբն»: Ուզգելի՝ ստածմամբն:

21. — էջ 244, տող վերէն 7. «աւրինակն»: Ուզգելի՝ աւրինակն, առ ի ընդուանութիւն միշտ սովոււ:

22. — էջ 248, տող վարէն 8. «երիթընաւորութիւնն և մի բնութիւնն»: Ուզգելի՝ Գ անձնաւորութիւնն և մի բնութիւնն:

23. — էջ 270, թիւ 277. վերնագիր: «Միսիթարանաց»: Ուզգելի՝ Մազթանաց:

24. — էջ 311, տող վարէն 15. «մինչև ի ժամանակս Դիսկղիտիանոսի Աղեքսանդրու հայրապետին»: Դիս. — Աղեքսանդրիոյ հայրապետ՝ Դիսկղիտիանոս անունով ծանօթ չէ. կայ Դիսնէսիսո՞ Գ. Դարու կիսուն:

25. — էջ 319, տող վերէն 5. «ձնաւդից»: Ուզգելի՝ գծողի:

26. — էջ 325, թիւ 337. «Երուսաղէմ 1706»: Ուզգելի՝ 1796: Նոյնպէս՝ էջ 345.

27. — էջ 327, թիւ 341, Ե. «Բազում ողորմածց»: Ուզգելի՝ բազումողորմ ԱԾ.:

28. — էջ 336, տող վարէն 5. «ի յիւր միանգամ գալուստն»: Ուզգելի՝ միւսանցամբ:

Նկատի առնելով հայերէն ձեռագիրներու յիշատակարաններուն մեծ կարևորութիւնը պատմութեան և մատենագրութեան համար, ինչպէս նաև անոնցմէ ոժանց գրական արժէքը, հարկ է շեշտել թէ յարգարժան Հեղինակը շատ օգտակար հատոր մը կ'ընծայէ հայագիտութեամբ պարապողներուն՝ իր այս աշխատութեամբ, որով երախտապարտ կը թողաւ ներկայ և գալիք սերունդները:

Ն. ԱՐԲ. ՄՈՎԱԿԱՆ



“ՀՈԳԵՅՈՅԶՁ ՑՈԼՔԵՐ”

Հեղինակ՝ ՍԵՊՈԽՆՀ Ն. Վ. Բ. ՍԱՐԳԻՒՍԻԱՆ

Տողերս գրողը ամբաստանուած է իր բները գրական կենաքի մէջ իրական արժէքները անտեսող և թերիներուն ու վրէպահներուն խոչորացոյցով նայող գրադատ, Օշականի մասնաւորաբար և «Մեհեան»ի իր խմբագիր ընկերներուն ընդհանուրապէս կիրարկած հարբենի սխալ սկզբունքով առաջնորդուող: Թէ ճիշդ չէ մեր գրական անդաստանին սպասնացող վերտնաս խորշակին ողդաբարիչն ու ողբերգուն ըլլալ ու կրծող նախանձով անբարբառ կենաք հոն արմատաւորուած կազնիներուն հասակին գիմաց: Չէ՞ որ համագոյքի չորս ծագերէն կիւլպէնկեան Մատենագրաբառ հոսող հատորները, փոքր ու մեծափոք, հազար կրնան ուս ուսի, կայք մը ապահովէլ իրենց համար գրապալատի դարակներուն վրայ: Հապճեպով տրուած ափյափոյ վճիռ:

Հայր Սեպուհի այս գործը՝ 1985ին լոյս տեսած Անթիլիսս, Մ. Տ. Կիլիկիոյ կաթողիկոսութեան Տպարանէն, 22 կտոր կրօնա-բարոյական խորքով գրութիւններ, 179 էջերով, մաքուր թուղթի վրայ — կարելի է գասել «մէկ շունչով կարգացուելիք» գրքերու շարքին: Բայց պէտք չէ խարուիլ բառերէն: Երկու — և իրարու հակադիր — մեկնութիւններ կարելի է տալ վերի (չտկերտեալ) բանաձևին: Ուրիշ խօսքով, երկու դասակարգի կարելի է բաժնել «մէկ շունչով կարգացուելիք» գրքերը: Անոնք որոնք խսկապէս կը հայեն ընթերցողը ու զինք իրենց կը կապեն, որով դժուար կը դառնայ ընդհատումը, ընդմիջումը ընթերցումին, և անոնք՝ հասարակ ու ծամուած խօսք, որոնց վրայէն կարելի է անցնիլ թռչունի արագութեամբ, քանի որ գաղափարներն ու մտածումները, լոյծ ու թափանցիկ, իրենց ծանծաղութեան, մակերեսայնութեանը բերումավ շատ դիւրաւ կիւրացուին, կը մարտուին միջակ ընթերցողէն, ու էջերը կը քալին արագօրէն՝ անձիգ ընթերցումէն մտրակուած:

Պիտի ուզէինք չխօսիլ ուղղագրական կամ տպագրական վրէպներու մասին:

Բայց չկրցանք անտարբեր անցնիլ գաղթաշխարհի մեր մամուլին մէջ յաճախաղէպէս կարգ մը տգեղ կամ սխալ երեսոյթներու առջևէն: Այսպէս, էջ 9ի վրայ կը հանդիպինք ծոլովուր-դի տգեղ տուղագարձուիլ կիսուած բառին և երեք էջեր անդին, ներ-ըրիզումիլ կիսուած բառին մէջ թիմուլած ըին (չչնչել) արմատ բառէ: Բաղմաթիւ են այս կարգի վրէպներ, որոնք գուցէ ներելի ըլլային հասարակ օրաթերթի մը պարագային:

Հայրսուրբին լեզուն, արդար ըլլալու համար պէտք է խօսուվանիլ, սահուն է ու գրեթէ անթերի: Ինչ որ կը պակսի իրենց իր զգացումները թեւաւրելու և մտածումները խորացնելու արուեստն է (ընդգծուած բառը չենք նկատեր անտեղի ինչպէս ծանրակշիռ):

Հայր Սեպուհի «Հոգեյոյզ Ցոլքեր»ը դժբախտաբար չկրցան յուզել մեր հոգին և ոչ իսկ միտքը (Մէկէն միւսը երկարող կարմիր թելը նուրբ է բայց դիմացկուն:) կա՛մ այս է որ մեր զգայարանքները, ժամանակէն մրձանարուած, բթացած են — իրողութիւնը այդպէս չէ բարերախտաբար: Մեր զգայնութիւնները փորձաքարի զարնելու համար գիմեցինք Սիամանթոյին ու Վարուժանին: Արդիւնքը, ուրախ ենք ըսելու, եղան քաջալերական: Եւ կա՛մ Վարդապետին ներաշխարհէն — միտք, սիրտ — արձակուած ցոլքերը, փայլատ ու ուժաքամ, անզօր են յուզելու ընթերցողը:

Այս բոլորով հանդերձ, Հայր Սեպուհի չենք թելադրեր իր գրիչը կոտրել: Ուրախալի է մեզ Հայ հոգեօրականի ձեռքին մէջ խաչին հետ ու քով տեսնել նաև գրիչը, պայմանաւ սակայն որ անկէ բխած տողերը նորուրիւն մը բերեն մեզի: առնուազն Ս. Գրական ճշմարտութիւնները աւելի ցայտուն ու առինքնորդ գոյներով բանան մեր տեսագաշտին: Կ'ընդունինք թէ դիւրին չէ այդ գործը: Բայց կամքն ու յարատե, հետեւզական ու համբերատար ճիզը կրնան հարթել մեր առջև դիզուած դժուարութիւններուն կէսէն աւելին: Զայդ կը մաղթենք Հ. Սեպուհին:

Դ. ՃԱՐՏԱՐ

ՅԻՍՈՒԽ ՏԱՐԻ ԵՐԵՎԱՆ

ԱՆԱԿԱՆԿԱԼ ԵՒ ԱՆԺԱՄԱՆԱԿ ՄԱՀ
Տ. ԹՈՐԳՈՄ ՊՏԾՐՔ. ԳՈՒՇԱԿԵԱՆԻ

Տ. ԹՈՐԳՈՄ ՍԵՐԲԱՂԱՆԻ առողջական վիճակը տարիներէ ի վեր դադրած էր բնականան ըլլալէ։ Այս խանգարումը իր սկիզբը կ'առնէր այն օրերէն, երբ առաքելութեան ելած էր դէպի Հնդկաստան և Հոլանդական կղզիները (այժմաւ ինտոնէզիան — Մ. Խ.), ուր կ'ենթարկուէր վատառողջ կլիմայի մը բոլոր վատանդներուն և քանիցու կը հիւանդանար ծանրապէս։ Իր Փիզիքականի տկարացման մէջ դեր ունեցած են նաև իր ի ժամանակաշաբաթամասում, անդ ուղարկած մտաւորական բազմատեսակ աշխատանքները։

Աւելի քան քսան տարիներէ ի վեր ՍԵՐԲԱՂԱՆԻ հնթակայ եղած էր չաքարի հիւանդութեան (diabète), որ սակայն իր մէջ լուրջ հանգամանք մը չէր ստացած, չնորհիւ իր զգուշաւորութեան և պահած խիստ ռուժիչին։

Կը նեղուէր նաև դժուարամարսութենէ, զար կը դարձանէր մարսիչ աղերով։ Զափազանց զգոյշ էր ցրտառութեան դէմ։ Աւելի քան տարի մը առաջ իր անցուցած ստքի արկածը պատճառ եղած էր իր ոչ-տակուն առողջութեան աւելի խանգարման։ Շուրջ երեք ու կէս ամիս մնացած էր հիւանդանոց, դրեթէ գամուռած անկողնին։ Արկածը թէկ ակարացաւ Ա. Հօր Փիզիքականը, բայց բարերախտաբար հետք չգեց ստքին վրայ։

Նկատուած էր որ ՍԵՐԲԱՂԱՆԻ իր մահուան օրը (10 Փետր., Աւրբաթ) անսովոր կիրապվ զուարթարմագրութեան մէջ էր։

Առաւետուն արթնցած էր ժամը 7 ին, նախաձաշած և զործի սկսած։ Շաքարը նոյն օր 1000ի վրայ 4 համեմատութեամբ էր, ինչ որ սովորական և աննշան քանակութիւն մըն էր։ — Ժամը 9.15ին Բնածայարանի երկու դասարաններուն միասնաբար «Ճեղիք Աստուածաբանութեան» դասն ունէր։ Ներս մտած է իր անքաժան չշալը ուսին՝ առոյդ քայլուածքով։ Իր լու արամագրութիւնը փախանցուած է

աշակերտներուն, որոնք իրարու մէջ բաներ մը կը փափսան եղեր նոյն պահուան։ Շինչ կայց, հարցուցած է ՍԵՐԲԱՂԱՆԸ։ «Աշխանչ, ՍԵՐԲԱՂԱՆ Հայր», պատասխանած են անոնք, «Ասեցինք որ ՍԵՐԲԱՂԱՆ Պապը (Պիտո միւ. Զոյք հովաւապետներու նոյն օրուան մէջ մեկնումը մեր աշխարհէն, ինչ զուգագիտութիւն — Մ. Խ.) վախճանած է այս առաւօտ։

Նոյն օրը Ցնօրէն Ժողովի գումարման օրն էր (Ժողովը կը գումարուի իր աշխատութեան անեակին մէջ), Ժողովը 4.5 անցած, երբ ժողովը դեռ պաշտօնապէս չէր բացուած, ՍԵՐԲԱՂԱՆԸ արտասովոր նշաններ ցոյց կու տայ. արժուկը սեղանին, ճակատը ափին մէջ, անհանգիստ երեսոյթ մը կ'առնէ։ Ժողովական Հայրերէն մին նկատելով ասիկա կը հարցնէ։ «ՍԵՐԲԱՂԱՆ Հայր, բա՞ն մը կ'առզէք։ Փախան պատասխանի, տարօրինակ նայուածք մը կ'ուղղէ վարդապետին, որ չփոթած՝ իր տեղը կը վերադառնայ։ ՍԵՐԲԱՂԱՆԸ ելնելու փորձիր կ'ընէ, չի յաջողիր և զրեթէ ուշակորոյս կը սահի աթոռէն։ Սպասաւորը eau de cologne ճակատը կը շփէ։ Այդ պահուան կը հասնի վանքին բժիշկը, Տքթ. Ն. Եղալիեան, և առաջին իսկ ակնարկէն կռահելով որ ՍԵՐԲԱՂԱՆԸ կաթուածի հնթարմածը է, ձեռքերուն-ստքերուն ասեղի թեթե հպումներով կը ստուգէ որ ՍԵՐԲԱՂԱՆին ամրողջ աջ կողմը անշարժութեան մտանուած է, կը հասնի նաև լուսարարապետ Մնօրոպ ՍԵՐԲԱՂԱՆ և շփթահար կը մնայ, տեսնելով Պատրիարք ՍԵՐԲԱՂԱՆԸ ահաւոր տագնապի մէջ և ուշակորոյս կը կանչուին նուև Ֆրանսական հիւանդանոցի բժշկապետ Տքթ. Պառէր և երեք այլ մտանագէտ բժիշկներ, որոնք կու գան այն եղբակացութեան, թէ ՍԵՐԲԱՂԱՆին կաթուածը ամենէն ահաւոր տեսակէ ուղղեղային արիւնահասութիւն էր։

Պատրիարքը, 65 տարեկան, վախճանեցաւ երեկոյեան ժամը 7.17ին և թաղուցաւ կիր., 12 Փետր.ին մեծ շուքով («Սին», 1939, Ժ. 8, Տարի, Մարտ-Ապրիլ, թիւ 3-4, էջ 146-149)։

«Սին», յաջորդ թիւով հանգամանօրէն պիտի անդրադառնանը մեծանուն Պատրիարքի բազմարդիւն կեանքին ու գրական բեղմնաւոր վաստակին։

ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ՄԻԱԼԹԵԱՆ ԵՕԹՆԵԱԿԻ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԷջ

1967ի վեցօրեայ պատերազմէն յետոյ սկիզբ առած գեղեցիկ սովորութեան մը համաձայն — եղելութիւնը ոչ մէկ կապ ունի յիշեալ քաղաքական դէպքին հետ, որուն հետեանքով Երուսաղէմի Հին Քաղաքը ևս անցաւ Խորաչէլեան իշխանութեան տակ — այս տարի ևս, 22-29 Յունուարի միջն, Երուսաղէմի մէջ կայացաւ Եկեղեցիներու — կամ Քրիստոնէական — Միութեան Եօթնեակը:

Մասնակցող Եկեղեցիները ինչպէս այդ վսկեմ նպատակին համար գործածուած աղօթավայրերը եղան գրեթէ նոյն, նման նախընթաց տարիներուն: Ըսինք զրերէ, որովհետեւ փոխան Ասորիներուն, որոնց վանքը առաջնորդող ճամբան փակուած էր Քովստի չէնքերուն փլուզման վտանգին պատճառաւ, Ռուսեր, երկրորդ տարին ըլլուզով, իրենց մասնակցութիւնը (թէև ոչ՝ գործօն) բերին յիշեալ շարժումնին:

Այս տարի ևս առաջին աղօթածողովը կայացաւ Անկիլիքաններու Սէյնթ Ճօրճ Եկեղեցւոյ մէջ: Քարոզիչն էր համայնքակետ Սամիր Քաֆիթիթի Եպս., որ խօսեցաւ վերջին քսան տարիներու ընթացքին եկիւմենիք շարժումին պարզած դրական երեւոյթներու մտաին, շնչար գնելով սակայն Անկիլիքան և Լուտերական Եկեղեցիներու միջն սերտացող յարաքիրութիւններուն վրայի Եղան տաղեր, աղօթք-մաղթանքներ և Ս. Գրական ընթերցումներ: Տիրապետող լիզուններն էին Անգլիերէնն ու Արարերէնը:

23 Յունուար, Երկուշաբթի, դարձեալ երեկոյեան ժամը 5ին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարի մութուլոյս կամարներուն տակ խոնուած էին բաղմազդի Քրիստոնեաններ, Եկեղեցական թէ աշխարհական, այր թէ կին, ալեոր թէ Թարմատի: Նկատի առած ամիսուկէս առաջ Հայաստանի մէջ պատահած ահաւոր երկրաշարժը, այս տարի, զանազան լեզուններով կատարուած Աստուածանչական ընթերցումներէ և Մննդեան ու Յայտնութեան տաղ-մեղեդիներէ բաղկացած հոգեգրաւ յայտագրի մը աւարտին, Պատր. Փօխանորդ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.ի նախագահութեամբ և օտար հոգեկորականներու մտանակցութեամբ, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ յիշեալ աղէտի բազմանազար զոհներուն համար: Նոյն նիւթն էր որ իր խօսքին մէջ շօշափեց Բարշ. Վարդան Սրբ. Անձմեան, Ամերիկահայ, որ քանի մը ամիս առաջ քաղաքս եկած էր ուսանելու մեր Ընծայարանին մէջ:

24 Յունուար, Երեքշաբթի, Լուտերականներու Եկեղեցիին էր կարգը: Յաղութական — Անկիլիքան, Լուտերական, Սկովտական — կրօնաւորներէ բացի, յայտագրին մէջ մաս ուռաւ Յոյն-Կաթոլիկ համայնքի պետ Գերշ. Լութֆի Եպս. Լահնամէ կուռ ելոյթ մը ունեցաւ Արաբ-Լուտերական Եպս. Նահիմ Նասօսար: Աւարտին, երիցատան մէջ հացն ու գինին կը սպասէին ճաշակուելու բազմալեզու ներկաններէն:

